Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները

Երևան 2014

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Երևան 2014

ՀՏԴ 342.731:323.1(042.3)
ԳՄԴ 67.400
Կ 871

Կ 871 Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները: Դաշտային ուսումնասիրություն.- Եր.: Եվրասիա համագործակցության հիմադրամ, 2021.- 54 էջ:

Դաշտային ուսումնասիրություն

Հայաստանի կրոնական և էթնիկ փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն

Ուսումնասիրության զեկույց

Այս զեկույցում արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի տեսակետների հետ: Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Նիդերլանդների թագավորության դեսպանատան կողմից Հայաստանին տրամադրվող աջակցության շրջանակներում: Զեկույցի բովանդակությունը պատկանում է բացառապես Եվրոպայի խորհրդին և կարող է չհամընկնել Նիդերլանդների թագավորության դեսպանատան տեսակետների հետ:

Սույն հրատարակության հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպայի խորհրդին: Այս հրատարակության որևէ մաս չի կարող վերահրատարակվել կամ որևէ ձևով և որևէ կերպ՝ էլեկտրոնային (լազերային սկավառակով, համացանցով և այլն) կամ մեխանիկական եղանակով, ներառյալ պատճենահանմամբ, ձայնագրմամբ կամ տեղեկությունների պահման և առբերման որևէ եղանակով տրամադրվել առևտրական նպատակներով առանց գրավոր համաձայնություն ձեռք բերելու Բուդապեշտում գտնվող Եվրոպական երիտասարդական կենտրոնի երիտասարդական բաժնից. 1-3 Zivatar utca, H-1024 Բուդապեշտ, Հունգարիա: Էլ փոստ՝ eycb.secretariat@coe.int:
Սույն հրատարակման բովանդակության վերարտադրությունը թույլատրվում է միայն ոչ-առևտրային կրթական նպատակներով և պայմանով, որ աղբյուրը նշվի ինչպես հարկն է:

Սույն փաստաթղթին վերաբերող ցանկացած այլ հաղորդակցություն պետք է հղվի Եվրոպայի խորհրդի երիտասարդական բաժնին.

Եվրոպական երիտասարդական կենտրոն, Ստրասբուրգ
30, rue Pierre de Coubertin
F- 67075 Strasbourg Cedex – France
Էլ փոստ. youth@coe.int

սրբագրվել է Ռեչել Էփըլբիի կողմից

ՏԴ 342.731:323.1(042.3)
ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-896-12-0
© Եվրասիա համագործակցություն հիմադրամ, 2021

Հետազոտությունը կատարվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից:

Հեղինակ՝

Հովհաննես Հովհաննիսյան

Հետազոտական խումբ՝
Իզաբելլա Սարգսյան
Գայանե Մկրտչյան

Խմբագիր՝
Գևորգ Տեր-Գաբրելյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Առկա ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի երիտասարդական բաժանմունքի «Հայաստանի կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն. առցանց պայքար անհանդուրժողականության դեմ» ծրագրի շրջանակներում Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանության ֆինանսական օժանդակությամբ:

Ծրագիրը կենտրոնացել է փոքրամասնություն կազմող խմբերի, հատկապես կրոնական փոքրամասնություններին պատկանող երեխաների և երիտասարդների իրավունքների վրա և նպատակ ունի կրթության ու իրազեկվածության բարձրացման միջոցով պայքարել փոքրմասնությունների դեմ ուղղված անհանդուրժողականության դեմ: Փոքրամասնությունների երեխաների և երիտասարդների խնդիրները լավ հասկանալն այդ գործընթացում կարևոր քայլ է, որը չի կարող իրականացվել առանց երեխաներին և երիտասարդներին ներգրավելու:

Փոքրամասնություն կազմող խմբերը՝ ներառյալ կրոնական փոքրամասնությունները, ընդհանուր հասարակության կողմից և իրենց համայնքի շրջանակներում ենթարկվում են երբեմն չգիտակցված ճնշման: Փոքրամասնությունների երեխաները և երիտասարդները կարող են ենթարկվել կրկնակի խտրականության. մի կողմից նրանք խոցելի են, կարող են հեշտությամբ հայտնվել խտրականության և խարանի թիրախում, մյուս կողմից փոքրամասնություններին հատուկ մեկուսացվածությունը խորացնում է այդ խտրականությունը:

Կրթությունը և կրթական ֆորմալ ու ոչ ֆորմալ մոտեցումների զարգացումն անհրաժեշտ է մարդու իրավունքների և արժանապատվության արժեքների ընկալում ձևավորելու համար, և այդպիսի նշանակալի հարցերի անդրադառնալիս էական է երեխաներին լսելը: Քարոզարշավներ կազմակերպելու և համապատասխան, թիրախավորված կրթական գործողություններ իրականացնելու համար մեր աշխատանքը պետք է հիմնված լինի էմպիրիկ տվյալների և որակի վերլուծության վրա. ամենից էական խնդիրները որոշելը և երեխաների իրականությունն իմանալը կարևոր են իրավիճակը հասկանալու համար: Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները նպաստում են հետագա գործողություններին՝ տրամադրելով փաստերի վրա հիմնված տեղեկատվություն, որն այնուհետև հիմք է հանդիսացել կրոնական անհանդուրժողականության դեմ պայքարի հետագա միջոցների պլանավորման և փոքրամասնություններին պատկանող երեխաների իրավունքների պաշտպանության համար:

Քանի որ երեխաները և երիտասարդներն աստիճանաբար ավելի շատ են իրենց հայացքներն արտահայտում, տեղեկատվություն ձեռք բերում և շփվում սոցիալական մեդիայի միջոցով, և քանի որ համացանցը նաև խտրականության և ատելության դրսևորման հարթակ է, հատուկ ուշադրություն է դարձվել ԵԽ-ի «Խոսքն առանց ատելության» հայաստանյան շարժման հետ կապի ապահովմանը:

Ծրագիրը կառուցված էր երեք նպատակների շուրջ.

- բնակչության (ներառյալ երիտասարդների և երեխաների) շրջանում իրականացնել ուսումնասիրություն հետագա հետազոտությանը նպաստելու և խտրականության դեմ առցանց քարոզարշավը կազմակերպելու համար էմպիրիկ տվյալներ տրամադրելու նպատակով,

- մոբիլիզացնել երիտասարդական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերի կոալիցիաներ կամ գործընկերություն ստեղծելու նպատակով, որը կնպաստի անհանդուրժողականության դեմ երիտասարդական քարոզարշավներին, ներառյալ առցանց քարոզարշավներին,

- կազմակերպել ուսուցանողների, երիտասարդական առաջնորդների և այլ տարածողների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքային սեմինարներ՝ իրազեկվածությունը բարձրացնելու և անհանդուրժողականությանն անդրադառնալու նպատակով:

Ի հավելումն այս ուսումնասիրության՝ ծրագիրն այսպիսով ընդգրկել է.

- Խորհրդակցություններ երեխաների և երիտասարդության քաղաքականությանն առնչվող մարդու իրավունքների, երեխաների և երիտասարդական կազմակերպությունների և հանրային հաստատությունների հետ ծրագրի համապատասխանության և հավանական կենտրոնացման մասին՝ նախկինում իրականացված նմանատիպ ծրագրերի հետ փոխլրացվածությունն ու շարունակականությունն ապահովելու համար:

Շահագրգիռ կողմերի հանդիպում, հանրային ներկայացում, ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և հետագա գործողությունների նախապատրաստում:

- Մարդու իրավունքների ուսուցմանն ուղղված դասընթաց ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության շաղկապմամբ. փոխանակվել են մեթոդներ, մոտեցումներ, լավագույն փորձառություններ և կրթության ոլորտի տարբեր դերակատարների համար տեղական ցանց է ստեղծվել: Ուսուցիչները, երիտասարդական աշխատողները, ուսուցանողները և ՀԿ-ները միասին աշխատել են երեխաներին և մարդու իրավունքները պաշտպանելու, ատելություն արտահայտող խոսքի և խտրականության դեմ պայքարելու ընդհանուր նպատակով: Արդյունքում ամրապնդվել է երկու հատվածների միջև երկարաժամկետ համագործակցությունը և բարձրացել է հանդուրժողականության մարդու իրավունքների ուսուցման անհրաժեշտության վերաբերյալ:

- Առցանց և տպագիր լրատվամիջոցների լրագրողների համար աշխատանքային սեմինարներ կրոնական փոքրամասնությունների խնդիրները պատշաճ կերպով լուսաբանելու և կողմնակալ լուսաբանումն ու ատելության արտահայտչաձևերը տարբերակելու գործիքների վերաբերյալ: Առցանց "Pop-up newsroom"-ը համախմբեց 30 լրագրողի՝ հրապարակելով Հայաստանում դավանանքի և խղճի ազատության թեման լուսաբանող զգալի թվով հոդվածներ:

- Երիտասարդական կազմակերպությունների համար փոքրիկ դրամաշնորհներ կրոնական և մշակութային փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականությանը և երեխաների իրավունքները հասկանալուն ուղղված երիտասարդական նախաձեռնություններին օժանդակելու նպատակով: Երիտասարդների կողմից և նրանց իսկ համար հինգ ծրագիր է իրականացվել երկրում, ինչպես օրինակ կրոնական բազմազանության վերաբերյալ Հայաստանի միակ մզկիթում տեղի ունեցած ֆոտոցուցահանդեսը, փոքրամասնությունների ներկայացուցիչների համար եռօրյա դասընթացը և ուսանողների համար մեկօրյա միջոցառումը, որը նրանց նաև խրախուսում էր տարածել սովորածը:

- Արդյունքների տեսանելիություն և դրանց, ինչպես նաև խնդիրների մասին իրազեկվածության բարձրացում հետևյալ կայքի միջոցով www.nohate.am/freedom-of-religion:

- Կրոնական հիմքի վրա խտրականության դեմ պայքարի գործողությունների ներառում «Խոսքն առանց ատելության» շարժման Հայաստանի ազգային քարոզարշավի ծրագրում կրթական ռեսուրսների ու գործիքների տարածման և հայաստանյան քարոզարշավին օժանդակելու միջոցով,

- Քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված համայնքային հանդիպումներ Արմավիր, Գյումրի, Իջևան և Վանաձոր քաղաքներում. համայնքներում իրականացված աշխատանքային սեմինարների 114 ուղղակի շահառուների ուշադրությունը հրավիրվել է թեմայի վրա և նրանք հնարավորություն են ունեցել ավելի լավ հասկանալ կրոնական փոքրամասնությունների երեխաների և երիտասարդների դեմ ուղղված ատելություն պարունակող արտահայտությունների վտանգը և սովորել այն հաղթահարելու եղանակները:

Ծրագիրը կիրառել է «Հայաստանի կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն» հետազոտության արդյունքները որպես գործիք կրոնական փոքրամասնությունների երեխաներին ուղղված խտրականության դեմ կանխարգելիչ միջոցների անհրաժեշտությունը փաստելու համար:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Մեր երախտագիտությունն ենք արտահայտում Հայաստանի տարբեր կրոնական և էթնիկ համայնքների համայնքապետերին, ովքեր աջակցել են սույն ուսումնասիրությանը, ինչպես նաև այն երիտասարդներին, ովքեր 2013թ. ամռանը մասնակցեցին հարցազրույցներին և խմբային քննարկումներին:

Փաստաթղթային հետազոտությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի <<Հայաստանի կրոնական և էթնիկ փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանություն>> ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացումը ֆինանսավորվել է Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան կողմից:

Kingdom of the Netherlands

ՍԵՂՄԱԳԻՐ

Այս հետազոտությունը ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի դիրքերից սոցիալական, ընտանեկան, եկեղեցական և համայնքային կյանքում Հայաստանի ազգային և կրոնական փոքրամասնությունների երեխաների կողմից առերեսվող խտրականության դեպքերի ուսումնասիրման առաջին փորձն է: Հետազոտության հատուկ նպատակն էր հասկանալ, թե երեխաները և երիտասարդներն ինչ են մտածում խտրականության և անհանդուրժողականության մասին, քանի որ մինչ այժմ իրականացված գրեթե բոլոր մյուս հետազոտությունները հիմնված են փորձագետների ուսումնասիրությունների վրա և հազվադեպ են արտահայտում երեխաների տեսակետները: Անհատական փաստերի, դեպքերի ուսումնասիրությունների և մինչ այդ իրականացված հետազոտությունների ուսումնասիրության հիման վրա զեկույցը ներկայացնում է ազգային և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանձնարարականներ և Հայաստանում խտրականության ու անհանդուրժողական առկա դեպքերի թվի նվազմանն ուղղված եզրակացություններ:

Հետազոտությունը ներառել է ութ ֆոկուս խմբերի հետ Հայաստանի հինգ տարբեր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում իրականացված քննարկումներ: Ֆոկուս խմբերից յուրաքանչյուրը բաղկացած էր 7-10 իգական և արական սեռի միջինը 15 տարեկան երեխաներից: Ազգային և կրոնական փոքրամասնությունների երեխաների ներկայացվածությունն ապահովելու նպատակով նախատեսվել էր ֆոկուս խմբերից վեցում ընդգրկել եզդի և մոլոկան էթնիկ համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև իրենց ավետարանչական, հիսնական, Կյանքի խոսք կրոնական համայնքի հետևորդ կամ Եհովայի վկա համարող անձանց: Քննարկման համար ընտրվել էին սոցիալական, ընտանեկան, եկեղեցական և համայնքային կյանքին առնչվող թեմաներ առօրյա կյանքում երեխաների իրավունքների ամբողջական պատկերը տեսնելու համար: Սակայն, հետազոտությունում նշված դեպքերից շատերը ոչ միշտ են օրինաչափություն հանդիսանում և միայնակ չեն կարող վերագրվել մեծամասնությանը:

Ողջ գործընթացը խնամքով մշակվել է մասնագետների կողմից, ովքեր հաշվի են առել տարիքային խմբերը, համայնքների տարբերությունները և թեմայի ընդհանուր զգայունությունը:

Հետազոտության արդյունքներն ի հայտ են բերում որոշ միտումներ, որոնք կարող են ընդհանրացվել ըստ սեռային, տարիքային, քաղաքային-գյուղական ուղղվածության: Որոշ համայնքներում առկա թվացյալ մեկուսացված դեպքերն ըստ երևույթին ունեն ավելի անհանգստացնող հետևանքներ:

Հետազոտությունը նաև բացահայտում է ազգային և կրոնական փոքրամասնություններին բնորոշ առանձնահատկությունների որոշակի տարբերություններ: Այսպես, օրինակ՝ Հայաստանի հեռավոր շրջաններում գլխավորապես ներփակ համայնքներով ապրող ազգային փոքրամասնությունները լրատվամիջոցներում հազվադեպ են ենթարկվում

կանխամտածված անհանդուրժողականության կամ դպրոցներում և հանրային այլ հաստատություններում հայտնվում խտրականության թիրախում: Միևնույն ժամանակ կենտրոններից հեռու գտնվելու պատճառով կրթությունը, հանրային ծառայությունները և բարիքներն նրանց ավելի քիչ հասանելիեն:

Սակայն հարկ է նշել, որ սոցիալական պայմանները հաճախ ստորադասում են ազգային կամ կրոնական փոքրամասնությանը պատկանելու կարգավիճակը, և գյուղերի բնակիչներն ավելի շուտ ենթարկվում են սոցիալական մեկուսացման աղքատությամբ պայմանավորված այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են ենթակառուցվածքների անհասանելիությունը, կրթություն ստանալու սակավ հնարավորությունը և/կամ ցանկությունը, որոնք բնորոշ են Հայաստանի այլ գյուղաբնակների մեծ մասին նույնպես: Ավելի կարևոր է այն, որ պահպանողական արժեքների և ավանդական կենսակերպի պատճառով որոշ էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաները, հատկապես աղջիկները, տեղական համայնքի և/կամ ընտանիքի կողմից հաճախ ենթարկվում են բազմակի խտրականության: Օրինակ՝ որոշ համայնքներում գրանցվել են աղջիկների նկատմամբ խտրականության դեպքեր՝ կապված տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներին հասանելիության հետ. մինչ տղաներին խրախուսում են օգտվել համացանցից և բջջային հեռախոսից, աղջիկներին դա արգելվում է, փոխարենը նրանց խրախուսում են դառնալ հոգատար մայրեր և կոմպետենտ կանայք: Այս դիտարկումը վերաբերում է նաև տղաների կողմից դպրոցը թողնելու և աղջիկների վաղ ամուսնության դեպքերին:

Ինչ վերաբերում է կրոնական փոքրամասնություններին, հատկապես, այսպես կոչված, ոչ ավանդական կրոնական ուղղությունների ներկայացուցիչներին, ինչպես օրինակ Եհովայի վկաներին, առկա է հավատքի վրա հիմնված խտրականության հստակ միտում, որը մասնավորապես նկատելի է հանրային դպրոցներում և զգալիորեն ակտիվացվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից: Մյուս կողմից ազգային փոքրամասնությունների համեմատությամբ կրոնական խմբերը, հատկապես քաղաքային վայրերում բնակվողները, ցուցաբերում են կրթություն ստանալու, հանրային կյանքին մասնակցելու և տարբեր ոլորտներում ծաղկուն կարիերա կառուցելու ավելի մեծ ձգտում: Սակայն կրոնական նորմերի, ինչպես նաև համայնքների առաջնորդների և ընտանիքների կողմից երեխաների իրավունքների և անձնական ազատությունների նկատմամբ կիրառվում են որոշակի սահմանափակումներ:

Հետազոտության մեկ այլ կարևոր արդյունք է հանդիսանում այն, որ հանրային դպրոցները ամենամեծ նշանակություն ունեցող հաստատություններն են, որտեղ փոքրամասնությունների երեխաների հանդեպ դրսևորվում է խտրականություն և, որպես կանոն, փոքրահասակ երեխաներն ավելի խոցելի են անհանդուրժողականության ցանկացած դրսևորման համար: Այս առումով ուսուցիչների, ինչպես նաև ծնողների թե՛ բացասական, թե՛ դրական դերակատարությունը չի կարելի թերագնահատել:

Չնայած այն մի շարք խնդիրներին, որոնց փոքրամասնություններն առերեսվում են Հայաստանում, նկատելի է, որ երեխաները զգալիորեն ավելի դրական և

լավատեսական են տրամադրված իրենց սոցիալական փորձառությունների և ապագայի հանդեպ, քան ներկայացվում է մասնագետների և համայնքների առաջնորդների կողմից:

Եղած խնդիրների զանազանության պատճառով խորհուրդ է տրվում փոփոխություններ իրականացնել հասարակության բոլոր մակարդակներում՝ սկսած համայնքային մակարդակից մինչև Հայաստանի պետական կառույցները: Ազգային և կրոնական փոքրամասնությունների երեխաների ներառմամբ մարդու իրավունքներին առնչվող խնդիրների, ինչպես նաև գործելակերպի և օրենսդրության փոփոխության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և ազգային ու կրոնական փոքրամասնությունների մշակութային արժեքները հանրային ոլորտում պաշտպանելն այս խնդիրների լուծման ուղղությամբ խորհուրդ տրվող որոշ մոտեցումներից են:

Հետազոտությունն ի սկզբանե իրականացվել է հայերեն լեզվով, ապա թարգմանվել է անգլերեն, ինչի արդյունքում գուցե փոփոխված լինեն ֆոկուս խմբերի քննարկումների ընթացքում հնչած արտահայտությունների նրբերանգները, թեև ջանք չի խնայվել հայախոսների ասելիքի հստակ և ճշգրիտ թարգմանությունն ապահովելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակն է ամբողջական պատկերացում կազմել Հայաստանում կրոնական և էթնիկ փոքրամասնությունների երեխաների իրավունքների ոտնահարման և դրանց պաշտպանության վերաբերյալ: Սա՝ Հայաստանի կողմից վավերացված ՄԱԿ Երեխաների պաշտպանության կոնվենցիայի փոքրամասնությունների երեխաների նկատմամբ հասարակական, ընտանեական, եկեղեցական, համայնքային կյանքին վերաբերող դրույթների իրագործումը վեր հանելու Հայաստանում արված առաջին փորձն է :

Անհանդուրժողականության ու խտրականության դեպքերի բացահայտումն ու վեր հանումը կարևոր է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իրագործման և Հայաստանում փոքրամասնությունների և նրանց երեխաների պաշտպանության մակարդակը բարելավելու տեսանկյունից: Խնդիրը ուսումնասիրվել է մի շարք դիտանկյուններից՝ սոցիալական մեկուսացման, կրթության և բժշկական ծառայությունների մատչելիության, կրթական որոշ առարկաներից հրաժարման իրավունքի բացակայության, խտրական ու անհանդուրժողական վերաբերմունքի առկայության՝ հասարակության տարբեր շերտերի կողմից, վաղ ամուսնությունների, հասարակական բարիքներից օգտվելու, հասարակության այլ անդամներից և հատկապես մեծամասնությունից չտարբերվելու ու օտարված չզգալու տեսանկյունից և այլն:

Հետազոտության նպատակներից է ստացված փաստացի նյութի ու եզրակացությունների հիման վրա ներկայացնել էթնիկ ու կրոնական փոքրամասնությունների երեխաների պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ, որոնք կնպաստեն հակախտրական ու անհանդուրժողական դեպքերը նվազեցնող մթնոլորտի, վերաբերմունքի, վարքի և օրենսդրություն ձևավորմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդաբանությամբ: Ութ ֆոկուս խմբեր են անցկացվել Հայաստանի հինգ մարզերում՝ գյուղական և քաղաքային բնակավայրերում: Ֆոկուս խմբերը կազմված են եղել 7-10 երեխաներից, որոնց միջին տարիքը եղել է 15-18 տարեկան: Նրանք ներկայացրել են էթնիկ ու կրոնական փոքրամասնություններ: Պահպանվել է իգական ու արական սեռերի հավասարության սկզբունքը:

Էթնիկ փոքրամասնություններից ընտրվել են եզդի համայնքը (Գյալթո գյուղ, Արագածոտնի մարզ) և մոլոկանների համայնքը, ովքեր էթնիկ կազմով ռուսներ են և 19-րդ դարում իրենց կրոնական հայացքների համար վտարվել են Ռուսաստանից Անդրկովկաս: Քանի որ մոլոկանությունը միասեռ չէ, բաղկացած է տարբեր խմբերից, Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղում անցկացված ֆոկուս խմբի մեջ ներառվել են տարբեր հոսանքների ռուս երեխաներ:

Կրոնական փոքրամասնությունների երեխաների ֆոկուս խմբեր անցկացվել են ավետարանական-հիսուսական եկեղեցու ներկայացուցիչների հետ (Սևան քաղաք), Եհովայի վկաներ կրոնական կազմակերպությունում (Երևան քաղաք), Կյանքի խոսք ու ավետարանական հավատքի եկեղեցի հոսանքների հետ (Վանաձոր քաղաք): Արմավիր քաղաքում հիսուսական համայնքի ու Եհովայի վկաների խառը ֆոկուս խումբ է կազմվել, իսկ առաքելական մեծամասնության երեխաների հետ հանդիպումները տեղի են ունեցել Երևան քաղաքում և Գյումրիում:

Հարցման հիմք է հանդիսացել Իզաբելլա Սարգսյանի փաստաթղթերի ուսումնասիրությունը, որտեղ նախանշվել են հիմնական խնդիրներն ու պրոբլեմները, որոնք առկա են կամ կարող են առկա լինել Հայաստանում: Հարցման նպատակն էր՝ համեմատել այդ տեսական ուսումնասիրությունն իրականության հետ, տեսնել, թե որ խնդիրները գոյություն ունեն, որոնք՝ ոչ, և ինչ հավելյալ խնդիրներ կան:

Նախկինում Հայաստանում որոշակի հետազոտություններ կատարվել են կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ[1], Հայաստանում հանդուրժողականության վիճակի մասին[2], դպրոցներում Հայ եկեղեցու պատմության դասավանդման վերաբերյալ[3], Հայ եկեղեցու պատմության դասագրքերի բովանդակության վերաբերյալ[4] և այլն[5]: Չնայած կրոնական դաշտի վերաբերյալ այս հետազոտությունների, եկեղեցի-պետություն քննարկումների ու կրոնի և հոգևոր դաշտի վերաբերյալ հեռուստատեսային քննարկումների առկայությանը, Հայաստանում դեռևս հետազոտություն չէր անցկացվել կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Երեխաների իրավունքների վերաբերյալ եղած հետազոտությունները վերաբերել են Հայաստանում բնակվող բոլոր երեխաներին՝ առանց տարբերակման ու բաժանման, որը հանգեցնում է փոքրամասնությունների խնդիրների անհետացմանը մեծամասնական պատկերի տակ: Սույն հետազոտությունն առաջինն է իր թեմայով ու էական նշանակություն կարող է ունենալ պատկան մարմինների և մասնագետների ուշադրությունը փոքրամասնությունների երեխաների խնդիրների վրա հրավիրելու համար:

---

[1] Տե՛ս http://armhels.com/wp-content/uploads/2012/06/1071arm-Kroni_Azatutyune_Hayastanum.pdf

[2] Տե՛ս Հանդուրժողականությունը Հայաստանում այսօր http://www.epfound.am/files/tolerance_in_armenia_occasional_policy_brief.pdf: Համագործակցություն հանուն ժողովրդավարության կողմից իրականացրել է «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» հետազոտությունը: Տե՛ս http://www.osce.org/hy/yerevan/74895?download=true

[3] Ստեփան Դանիելյան, Արա Ղազարյան, Հովհաննես Հովհաննիսյան, Արթուր Ավթանդիլյան, Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, Երևան, 2012 http://www.religions.am/files/1706/pastathter/ps1.pdf :

[4] Հետազոտությունը իրականացվել է Հովհաննես Հովհաննիսյանի, Սաթենիկ Մկրտչյանի և Արմինե Դավթյանի կողմից Բաց հասարակության հիմնադրամների միջոցներով http://www.religions.am/files/3290/library/legal/L011.pdf:

[5] Այս մասին բավականին մանրամասն ներկայացրել է Իզաբելլա Սարգսյանը իր հետազոտության մեջ:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2011թ. Հայաստանում անցկացված մարդահամարի տվյալներով Հայաստանի բնակչության 98%-ը կազմում են էթնիկ հայերը, որոնց 92%-ը իրենց համարում են Հայ առաքելական եկեղեցու (ՀԱԵ) հետևորդ[6]: Ըստ փորձագետների, ՀԱԵ հետ իրենց նույնականացրած մարդկանց մեծամասնությունը եկեղեցու հետ բավականին թույլ են կապված: ՀԱԵ հետևորդների մեջ հաճախ տեղավորում են աթեիստներին, աշխարհիկներին, ագնոստիկներին և այլ խմբերի, որոնք իրենց համարում են մշակութորեն կապված ՀԱԵ-ի հետ, բայց ոչ կրոնական աղերսներով: Կրոնական փոքրամասնությունների երեխաների հետ մեր ունեցած զրույցների ժամանակ երեխաները ՀԱԵ հետևորդներին կամ մեծամասնության ներկայացուցիչներին բնութագրում էին որպես «աշխարհիկների», որոնք հեռու են հոգևոր իրողություններից:

Հայաստանում կան 65 գրանցված կրոնական կազմակերպություններ[7] և մի քանի չգրանցվածներ, իսկ էթնիկ փոքրամասնությունները գրանցված են որպես հասարակական կազմակերպություններ[8]: Գրանցված կրոնական կազմակերպությունների մեծ մասը ներկայացնում են բողոքական-ավետարանական տարատեսակ հարանվանություններ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում պենտեկոստալ եկեղեցիները: Բացի այդ Հայաստանում գործում են ավանդական ռուս ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիները, որոնց նկատմամբ ՀԱԵ վերաբերմունքը լոյալ է:

ՀԱԵ-ն բացասական վերաբերմունք ունի բողոքական-ավետարանական և այլ ոչ ավանդական կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ՝ համարելով, որ նրանք զբաղվում են հոգեորսությամբ (չնայած դրա իրավական սահմանումը չկա), կամ պառակտում են ազգն ու քայքայում պետականությունը և այլն: 2004թ. Հայաստանում կատարված սահմանադրական բարեփոխումների արդյունքում նոր Սահմանադրության մեջ ավելացավ 8.1 հոդվածի առաջին մասը, որով «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»[9]:

---

[6] Տե՛ս http://armstat.am/file/article/sv_03_13a_520.pdf
[7] Տե՛ս http://gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos%20gov.pdf
[8] Տե՛ս http://gov.am/u_files/file/kron/min.pdf
[9] Տե՛ս http://www.concourt.am/armenian/constitutions/index.htm

2007թ. փետրվարի 22-ին ՀՀ ազգային ժողովն ընդունեց «Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ միջև հարաբերությունների մասին» օրենքը, որով եկեղեցին իրավունք ստացավ դերակատարում ունենալու հանրային դպրոցներում: Դա ՀԱԵ-ին հնարավորություն տվեց սերտացնել հարաբերությունները պետական տարբեր մարմինների հետ, արդյունքում հանրակրթական դպրոցում «կրոնների պատմություն» փորձնական առարկան փոխարինվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայով: Բացի այդ հրապարակային հարթություններում իշխանական գործիչները սկսեցին առավել հաճախ երևալ եկեղեցականների հետ, եկեղեցին մեծ դեր ստացավ պետական գործերում, որոշ եկեղեցականներ հայտնվեցին տարբեր սկանդալների կենտրոնում[10], պարբերաբար նոր օրենքների նախագծեր ներկայացվեցին կրոնական ոլորտի կարգավորման վերաբերյալ, որոնց մի մասը ակնհայտորեն միտում ուներ նվազեցնել ՀԱԵ-ից բացի մյուս կրոնական կազմակերպությունների գործունեության ոլորտները: Օրենքի նախագծերի մեծ մասը խիստ գնահատականի է արժանացել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Վենետիկի հանձնաժողովի կողմից: Օրենքներից մեկում մասնավորապես փորձ էր կատարվել սահմանել «սուրբ երրորդություն» և այլ կրոնական հասկացություններ:

Ատելության կոչեր կամ դրանց նպաստող հանգամանքեր ստեղծվում են որոշակի լրատվական միջոցների կողմից, որոնք գործում են ազգայնականության դաշտում և իրենց պարտքն են համարում «մեկ ազգ, մեկ կրոն, մեկ մշակույթ» շովինիստական դրույթի տարփողումը: Էական խնդիր է լրագրողների՝ կրոնական ու էթնիկ փոքրամասնությունների հարցերում պատրաստվածության ցածր մակարդը, ինչը հաճախ ապատեղեկատվության պատճառ է դառնում և նպաստում ատելության սերմանմանը: Նման պատճառ կարող են դառնալ որոշ հոգևորականների կողմից արված հայտարարությունները, որից հետո ազգայնականության մեծ ալիք է բարձրանում ընդդեմ հատկապես կրոնական փոքրամասնությունների: Այդպիսի օրինակ է վերջերս ՀԱԵ ներկայացուցիչ Կոմիտաս վրդ. Հովհաննիսյանի կողմից արված հայտարարությունը, որ կրոնական այլ կազմակերպությունները ֆինանսավորվում են արտասահմանից և միտված են քայքայելու հայոց պետականությունը[11]: Դրանից անմիջապես հետո հարձակումներ տեղի ունեցան կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների ու նրանց գրասենյակների վրա, որոնք դա կապեցին վերը նշված հայտարարության հետ[12]:

---

[10] Արարատյան հարապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ միասին հայտնվել էին օֆշորային սկանդալի կենտրոնում: Մանրամասները տե՛ս http://www.lragir.am/index/eng/0/comments/view/30215

[11] Տե՛ս http://armenpress.am/arm/news/734447/hayastan-nertapancats-axandavorakan-sharzhumn-yntaniqum.html

[12] Երևանի ավետարանական եկեղեցու հովիվ Լևոն Պարտակչյանի հայտնած տեղեկությունների համաձայն, այդ հայտարարությունից հետո իրենց եկեղեցի է ներխուժել դանակով զինված մի երիտասարդ ու հետաքրքրվել հովվի որտեղ լինելով: Տե՛ս http://goo.gl/cXRBBR

Այս իրավիճակը չէր կարող չանհանգստացնել կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին, որոնք պարբերաբար հայտնվում էին թիրախի վիճակում, ներքաշվում դատական գործընթացների մեջ (օր.՝ Կյանքի խոսքն ընդդեմ Իրավունք թերթի կամ Սևանի ավետարանական եկեղեցին ընդդեմ Շանթ հեռուստաընկերության և այլն), որով էլ խթանվում է անհանդուրժողական ու խտրական վերաբերմունքը կրոնական փոքրամասնությունների նկատմամբ[13]: Նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքի մասին են վկայում նաև Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվող մամուլի մոնիտորինգները, որտեղ հաճախ առկա են լինում ատելության կոչեր[14]: Նույն պնդումները չի կարելի անել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, որոնք չնայած ազատ են իրենց գործողություններում, չկան ատելության կոչեր նրանց նկատմամբ և նրանք առավել մեծ հնարավորություններ ունեն ինքնուրույնություն ունենալու, այդուհանդերձ էթնիկ փոքրամասնությունները Հայաստանում ավելի առանձնացված ու մեկուսացված վիճակում են գտնվում, որը մեծապես պայմանավորված է այդ համայնքների ներքին որոշմամբ՝ պահպանելու իրենց ինքնությունն ու ինքնուրույնությունը, սակայն նաև՝ պետական հոգատարության սակավությամբ:

ՄԱԿ-ի կողմից ընդունված «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածը սահմանում է. «1. Մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից: 2. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից կամ պատժից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքի հիմքով»:

---

13 Տե՛ս http://amnesty.org/en/library/asset/EUR54/002/2013/en/6d6a852f-6494-4ef5-bc13-1373f154e0de/eur540022013en.pdf

14 Տե՛ս http://www.religions.am/files/3247/documents/comments/p13.pdf

Չնայած վերը նշվածին, ֆոկուս խմբերից պարզվեց, որ հաճախ փոքրամասնությունների երեխաների խնդիրները չեն տարբերվում մնացած երեխաների խնդիրներից, հաճախ երեխաները չեն գիտակցում իրենց նկատմամբ դրսևորված ոչ բարեհաճ վերաբերմունքը ու դա չեն դիտարկում իբրև պրոբլեմ, և փոքրամասնությունների երեխաների կարծիքները էական տարբերություններ ունեն իրենց իսկ համայնքի մեծահասակների կարծիքներից: Ստորև այդ բացահայտումներին կանդրադառնանք առանձին-առանձին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ և ՍՏԻԳՄԱ

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ էական տարբերություններ կան գյուղական ու քաղաքային բնակչությունների շրջանում սոցիալական ներգրավվածության աստիճանի առումով՝ անկախ նրանից, թե նրանք ո՛ր կրոնական կամ էթնիկ խմբին են պատկանում: Սոցիալական մեկուսացմանը նպաստում են սոցիալական պայմանները, ենթակառուցվածքների անհասանելիությունը, մասնավորապես քանդված ու չվերանորոգվող ճանապարհները, թույլ կապը շրջկենտրոնի և կառավարական այլ կենտրոնների հետ, տրանսպորտային միջոցների ու շուկայի հետ կապի համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը, մշակութային չներգրավվածությունը և այլն:

Սոցիալական չներգրավվածությանը նպաստող հիմնական գործոններից է աղքատությունը: Ֆինանսական վիճակը և բարեկեցությունը նշվում էին որպես հիմանական խոչընդոտ՝ ավելի լայն ներգրավվածության համար սոցիալական ու մշակութային կյանքում:

Թե՛ կրոնական, և թե՛ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները զգուշավոր են քաղաքական ներգրավվածության առումով, պահպանում են իրենց լոյալությունը գործող իշխանությունների նկատմամբ ու նշում իրենց չհետաքրքրվածությունը քաղաքական պրոցեսներում: Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենց լոյալությունը հիմնավորում են կրոնական մոտիվներով: Նման մոտեցումը բնորոշ է տարբեր երկրների փոքրամասնություններին, որոնք չեն ցանկանում իրենց խնդիրներին ավելացնել նորերը և փորձում են մեկուսացվածության միջոցով իրենց հեռու պահել քաղաքական խնդիրներից:

ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրոնական փոքրամասնությունները երեխաները, որոնց հանդիպեցինք Արմավիր, Սևան, Վանաձոր և Երևան քաղաքներում նշում էին, որ իրենք որևէ կերպ մեկուսացվածություն չեն զգում հանրային բարիքներից օգտվելու կամ մեծամասնության երեխաների հետ հավասարություն զգալու տեսանկյունից: Ի տարբերություն էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների՝ նրանք ներգրավված են հասարակական, մշակութային ու սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, մասնակցում են մշակութային, սպորտային և այլ միջոցառումների ու հիմնականում չեն զգում իրենց տարբերությունն ուրիշներից: Սակայն ներգրավվածությունը հիմնականում կրում է միակողմանի բնույթ, այսինքն՝ կրոնական հիմնարկները կազմակերպում են իրենց երիտասարդական միությունները, ամառային կամ ուսուցողական ճամբարները, մշակութային և ակտիվ գործունեություն խթանող խմբակներն ու միջոցառումները, որոնց մեջ հիմնականում ներգրավված են հենց տվյալ խմբին հարող երեխաները:

Միակ տարբերությունը, որ մատնանշում են կրոնական փոքրամասնությունների երեխաները, իրենց հոգևոր բնույթն է, ինչն իրենց տարբերակում է մեծամասնությունն կազմող «աշխարհիկներից»: Աշխարհիկներ ասելով երեխաները նկատի ունեին ՀԱԵ նոմինալ հետևորդներին, որոնք ակտիվ չեն հոգևոր պրակտիկաներում և սահմանափակվում են ավանդական ծիսական, ոչ պարբերական գործողություններով:

Կրոնական փոքրամասնությունների երեխաների ինքնության բաղադրիչների մեջ առաջին պլանում է հայ լինելու և հետո միայն այլ կրոնական համայնքի պատկանելու հանգամանքը, ինչն էլ պայմանավորում է նրանց ներգրավվածությունը հասարակական կյանքում: Բացի այդ, որոշ կրոնական համայնքների երեխաներ նշեցին, որ իրենք որևէ խնդիր չեն տեսնում իրենց այլ ընկերների հետ ՀԱԵ այցելելու, պատարագին ներկա գտնվելու և մոմ վառելու մեջ:

ԷԹՆԻԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կողմից դիտարկված եզդի ու ռուս մոլոկան երեխաները Հայաստանում գտնվում են բավականին մեկուսացված վիճակում ու չեն ինտեգրվում հայկական միջավայրում: Եզդի երեխաների պարագայում չկան լեզվական խոչընդոտներ, քանի որ նրանց մեծ մասը խոսում և հասկանում է հայերեն: Ռուս մոլոկանների պարագայում երեխաների մեծ մասը որոշակի չափով հասկանում է հայերեն, սակայն վարժ չի խոսում մեծամասնության լեզվով, ինչը ևս սոցիալական մեկուսացման հիմք է դառնում: Ռուս մոլոկանների մեծ մասը ազգակցական կամ այլ թելերով կապված են Ռուսաստանում բնակվող իրենց հայրենակիցների հետ, ինչը նրանց մոտ ստեղծում է տրամադրություն, որ նրանք որոշակի տարիքում պիտի արտագաղթեն Հայաստանից ու բնակություն հաստատեն Ռուսաստանում: Նման տրամադրությունը նպաստում է սոցիալական մեկուսացման խորացմանը:

Երկու էթնիկ փոքրամասնությունների պարագայում մեկուսացվածությունը գալիս է ներքին համոզմունքներից, քանի որ էթնիկ փոքրամասնությունները նման միջոցներով փորձում են թույլ չտալ ասիմիլացում և պահպանել ազգային ինքնությունը: Գյուղական համայնքներում ապրող էթնիկ փոքրամասնությունների երեխաները չունեն որոշակիություն՝ արդյո՞ք արժի ուսումը շարունակել բարձրագույն կամ մասնագիտական կրթական հաստատությունում: Դպրոցներում աշակերտների փոքր քանակությունը և ուսուցիչների անմատչելիությունը բացասաբար է ազդում կրթության որակի և, հետևաբար, երեխաների մոտիվացիաների վրա, քանի որ շատ դեպքերում տեղական համայնքերում ուսուցիչներ չկան, իսկ այլ համայքներից նրանք հաճախ կամ չեն կարողանում կամ տարբեր պատճառներով չեն գալիս տվյալ համայնքում դասավանդելու: Երեխաները դժվարանում են նկարագրել ապագայի իրենց կանխատեսումները կամ նպատակները՝ ուսման առումով: Նրանց տեսլականն ապագա հավելյալ ուսման փոխարեն ավելի միտված է ընտանիք կազմելուն ու հաց վաստակելուն ընտանիքի համար:

Եթե եզդի երեխաների որոշ մասը ընկերություն է անում հայ իրենց հասակակիցների հետ, ապա ռուս մոլոկանների շրջանում բոլոր երեխաները միաբերան շեշտեցին, որ իրենք հայազգի ընկերներ չունեն և իրենց համայնքի փակվածությունը իրենց հաճախ թույլ չի տալիս այլազգի ընկերներ ունենալ: Եզդի երեխաների շրջանում նկատելի էր նաև սոցիալական վատ դրությունը ու նրանց բնակավայրի մեկուսացվածությունը շրջկենտրոնից, իսկ մոլոկանների գյուղական համայնքը գտնում էր հենց գլխավոր ճանապարհի վրա ու դրանով հանդերձ առավելություն ուներ այլ համայնքների նկատմամբ: Չնայած դրան, մոլոկանների Ֆիոլետովո համայնքի ներքին ավոտճանապարհները գտնվում էին անմխիթար վիճակում, իսկ եզդի Գյալթո համայնքում դրանք ընդհանրապես բացակայում էին:

ՈՒՍՈՒՄ

Ուսման հասանելիությունը

ՄԱԿ-ի կողմից ընդունված «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի հոդված 28-ի համաձայն, կոնվենցիային միացած պետությունները պարտավորվում են ապահովել բոլոր երեխաների հավասար իրավունքները կրթության ոլորտում, ապահովել անվճար տարրական կրթությունը, ընդհանուր և մասնագիտական կրթության պարագայում օգնել կարիքավոր երեխաներին, ապահովել բարձրագույն կրթության մատչելիությունը, միջոցներ ձեռնարկել դպրոց կանոնավոր հաճախելու և դպրոցը թողած երեխաներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ և այլն: Նման մոտեցումներ է սահմանում նաև ՀՀ կառավարության կողմից 2003թ. դեկտեմբերի 18 N 1745-ի որոշմամբ հաստատված ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը:

Թե՛ կրոնական, և թե՛ էթնիկ փոքրամասնությունների պարագայում պետությունը կատարում է իր վրա ստանձնած պարտավորությունները՝ տրամադրելով անվճար տարրական, ինչպես նաև ընդհանուր և մասնագիտական կրթություն: Այս առումով որոշակի բացառություն են կազմում եզդի համայնքի երեխաները, որոնց գյուղական համայնքում չկա ավագ դպրոց և երեխաները, կրթությունը շարունակելու պարագայում, պետք է գնան հարևան համայքներ, ինչը շատ դեպքերում ծախսատար ու աննպատակահարմար է:

Այդուհանդերձ պետք է նշել, որ եզդի համայնքում շատ քիչ են այն երեխաները, ովքեր ցանկություն ունեն կրթությունը շարունակել ավագ դպրոցում, իսկ առավել ևս՝ բուհերում: Ռուս-մոլոկան երեխաների պակաս ինտեգրվածության պատճառով նրանք հիմնականում շարունակում են իրենց կրթությունը գյուղատնտեսության հետ առնչվող մասնագիտությունների գծով, սակայն ոչ Հայաստանում, քանի որ լեզվական խոչընդոտը նրանց նման հնարավորություն չի տալիս: Վերջին տարիներին համայնքի միակ դպրոցի տնօրենը հիշեց ընդամենը մեկ կամ երկու երեխայի անուն, ովքեր կրթությունը շարունակել են Ռուս-սլավոնական համալսարանում:

Երեխաներին Հայաստանում գործող ռուսական դեսպանատան միջոցով տարբեր ծրագրեր են առաջարկում կրթությունը Ռուսաստանում շարունակելու համար և իրենք ընտրում են հենց այդ հնարավորությունը: Ռուսաստանում նրանց առաջարկվող կրթությունը հիմնականում անվճար է մոլոկան երեխաների համար:

Կրոնական փոքրամասնությունների երեխաների պարագայում խնդիրն այլ է: Այս պարագայում առավելապես գործ ունենք գյուղական ու քաղաքային բնակչության մեջ հանդիպող ընդհանուր օրինաչափությունների հետ, երբ քաղաքաբնակ երեխաներն առավել ակտիվ են կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու հարցում: Կրոնական պատկանելիությունը երեխաների շրջանում խոչընդոտ չէր հանդիսանում կրթություն ունենալու և մասնագիտություն ստանալու համար: Մեզ հանդիպած երեխաների շրջանում կային այնպիսիք, որոնք ինքնուս կոմպյուտերային ծրագրավորում են սովորել և ինովացիոն ծրագրեր մշակել: ՀԱԵ հետևորդ երեխաներից կրոնական փոքրամասնությունների երեխաների տարբերությունները հիմնականում ակտիվության մակարդակի, կամավորական գործունեությունների մեջ ներգրավվածության, առավել պահպանողական մոտեցումների մեջ է: ՀԱԵ երեխաների կրոնական գործոնն էական կարևորություն չունի առօրյա գործողությունների մեջ կողմնորոշվելու ու աշխարհայացքային դիրքորոշումներ ունենալու մեջ, քանի որ նրանք հիմնականում աշխարհիկ են, իսկ կրոնական փոքրամասնությունների պարագայում կրոնական գործոնը էական նշանակություն ունի առօրյա որոշումների ու կյանքի ուղին ընտրելու մեջ, որով էլ պայմանավորվում է նրանց առավել պահպանողական բնույթը:

Դպրոցից վաղաժամկետ հրաժարվողները (տղաներ և աղջիկներ)

Գյուղում բնակվող երեխաները առավել վաղ տարիքում են թողնում դպրոցը՝ հիմնականում Ռուսաստանում աշխատանք գտնելու նպատակով: Դա տարածված է ռուս-մոլոկանների ու եզդիների շրջանում, որոնք դպրոցը չավարտած կամ իննամյա կրթությամբ գնում են Ռուսաստան՝ բարեկամների մոտ աշխատելու և ընտանիքին օգնելու:

Գյումրիում ՀԱԵ հետևորդ երեխաներից մեկը պատմեց, որ իրենց դասարանում կար կրոնական փոքրամասնություններից մեկին պատկանող աղջիկ, որը դպրոցը թողեց վաղ տարիքում: Երեխաների ունեցած տեղեկությունների համաձայն աղջկան մայրը դրդել է զբաղվել պոռնկությամբ, որի պատճառով էլ նա մեկուսացվել է ու դուրս մնացել դպրոցից:

ԲՈՒՀը թողնելու երևույթը պայմանավորված է հիմնականում ֆինանսական դրությամբ ու բնորոշ է Հայաստանում բնակվող բոլոր երեխաներին:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները

Ծեծ առանց խտրականության

Դպրոցներում (բացառությամբ Երևան քաղաքի որոշ դպրոցների) տարածված խիստ և անհանդուրժելի բացասական երևույթներից է դեռևս միջնադարից Հայաստանում ավանդապաշտորեն պահպանված և գուրգուրված՝ երեխաների նկատմամբ ֆիզիկական պատիժը, երբ ուսուցիչը կամ ուսուցչուհին կարող են կավիճ շպրտել աշակերտի վրա (լավագույն դեպքում) կամ ցուցափայտով, գրքով, այլ իրերով կամ ձեռքով հարվածել երեխային: Նման արարքներ արվում են հիմնականում փոքր տարիքի երեխաների նկատմամբ, ովքեր ավելի խոցելի են: Բնականաբար և՛ ֆիզիկական պատիժը, և՛ ընդվզումը դրա դեմ ավելի բաժին է ընկնում տղաներին քան աղջիկներին: **Աղջիկները, սակայն, չեն միջամտում, որը խորացնում է երևույթի անընդունելիությունը և պայմաններ ստեղծում, որ նրանք՝ մեծանալուց հետո, հանդուրժեն այն կամ կիրառեն:** Արմավիրում բնակվող երեխաներից մեկը պատմեց, որ իրենց ուսուցիչներից մեկն ամեն օրը դասարան է մտնում երկար ցուցափայտով և ասում. «Սա ձեր մեծ եղբայրն է, ով իրեն լավ չպահեց, եղբայրը նրան պատժելու է»:

Էթնիկ փոքրամասնություն կազմող երեխաների մոտ, մասնավորապես, եզդի երեխաների, գերակշռում է այն պատկերացումը, որ ֆիզիկական պատիժը գործածվում է միմիայն դրական նկատառումներով, ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների կողմից: Սեփական իրավունքների մասին պատկերացումն իսպառ բացակայում է: Նրանք կարծում են, որ ծեծի հարցում մեղավոր են միայն երեխաները և որ դա նորմալ երևույթ է և, ավելին, որոշ երեխաներ այն համարում են երեխա դաստիարակելու միակ ճիշտ ձևը: Այս պատկերացումը փաստում է, որ շատ խորը պակաս կա երեխաների իրավունքների մասին գիտելիքի, և, առաջին հերթին՝ մեծահասակների մոտ, և մեծ աշխատանք է պետք տանել մեծահասակների հետ՝ եղած կարծրատիպերում/պատկերացումներում որևէ դրական փոփոխություն ձևավորելու համար:

Խտրականություն առանց ծեծի

Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից ոմանք նշում էին, որ սկզբնական շրջանում, երբ ուսուցիչը կամ ուսուցչուհին տեղեկանում են իրենց՝ այլ կրոնական ուղղության պատկանելու մասին, որոշակի փոփոխություն նկատվում է նրանց վերաբերմունքի մեջ, որը, սակայն, ժամանակի ընթացքում փոխվում է դեպի դրականը: Բոլոր երեխաների մոտ գերիշող էր այն համոզումը, որ հատկապես վերջին տարիներին որոշակի դրական փոփոխություններ կան ուսուցիչների ընկալումների ու վերաբերմունքի մեջ դեպի կրոնական փոքրամասնությունները: Նկատելի է նաև զգուշավորություն, որը պայմանավորված է վերջին տարիներին միջազգային կազմակերպությունների կողմից կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ ու հրապարակված տարբեր միջազգային զեկույցներով խնդրի բարձրաձայնմամբ: Ըստ մեր հետազոտության, ուսուցիչների հետ ունեցած բոլոր տարաձայնությունները դրական լուծում են ստացել տնօրենների կողմից, որոնք պաշտպանել են փոքրամասնությունների իրավունքները:

ՀԱԵ պատմություն առարկայի դասընթացի ժամանակ որոշ ուսուցիչներ ինքնակամ, առանց ծրագրի մեթոդիկային հետևելու դասընթացը սկսում են «Հայր մեր» աղոթքով, որի ժամանակ աշակերտները ոտքի են կանգնում, իսկ վերջում՝ խաչակնքվում: Դասընթացի ժամանակ կատարվող ու պարբերաբար կրկնվող այս ծիսական գործողությունը հակասում է որոշ կրոնական կազմակերպությունների ու, մասնավորապես, Եհովայի վկաների կրոնական համոզմունքներին: Դա նաև խախտում է երեխաների իրավունքները և հակասում է կրոնի ու պետության անջատման սահմանադրական սկզբունքին: Արմավիրի դպրոցներից մեկում ուսուցչուհին որոշել է յուրահատուկ կերպով այս խնդրին լուծում տալ, քանի որ Եհովայի վկաները հրաժարվել են աղոթել և առավել ևս խաչակնքվել. «Ուսուցչուհին մեզ հանում էր դասարանից դուրս, մենք սպասում էին դռների մոտ, մինչև մնացածը աղոթում էին, հետո մենք ներս էինք գալիս ու շարունակում դասը»:

Նման մոտեցումը խտրական վերաբերմունքի վկայություն է, սակայն պետք է նշել, որ նման երևույթների այլ դպրոցներում չենք հանդիպել, չնայած խնդիրներ Եհովայի վկաների հետ այս հարցի կապակցությամբ մշտապես եղել են:

Որոշ ուսուցիչներ բացահայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորում երեխաների կրոնական համոզմունքների նկատմամբ: Ահա թե ինչ է պատմում երեխաներից մեկը. «Որ առաջին անգամ ուսուցիչը մտավ մեր դասարան ծանոթանալու, ինքը հարցրեց, թե ինչ-որ ուրիշ կրոնի մարդ կա՞: Մենք կանգնեցինք, ասեցինք Եհովայի վկա ենք, այդժամ մեզ վիրավորեց, ասեց պառավների ու բիձեքի հետ գնում նստում աղոթում եք գալիս եք, մենք էլ բան

չասեցինք, հաջորդ օրը գնացի ասեցի կլինի ես ձեր հետ չաղոթեմ, ասեց աղոթի, բայց մի խաչակնքվի, ես չէի աղոթում, ոչ էլ խաչակնքվեցի, ուսուցիչը ասեց կսովորես հայր մերը, ես աստվածաշնչից սովորեցի, սակայն ուսուցիչը ասեց մերը գրաբար է, ձերը աշխարաբար, ասեց՝ մերը կսովորես»:

Խնդիրներ հասակակիցների հետ

Կրոնական ու ազգային փոքրամասնությունների երեխաները հաճախ ենթարկվում են ծաղրանքի կամ ոչ բարեհաճ վերաբերմունքի հասակակիցների կողմից: Նման երևույթները հիմնականում տեղի են ունենում դպրոցում, երբեմն՝ այլ հասակակիցների, ուսուցչի, ծնողների լուռ համաձայնությամբ կամ թողտվությամբ: Եհովայի վկաներ կազմակերպության երեխաներից մեկը պատմեց, որ իրենց դասարանում ուսուցչուհին ստեղծել է այնպիսի իրավիճակ, երբ հրահրել է թշնամանք ու ատելություն իր նկատմամբ, որի արդյունքում ագրեսիվ տրամադրված տղաներից մեկը հարձակվել է իր վրա ու պատռել իր վերնաշապիկը. «Հայոց լեզվի ժամին, լեզվի ծագման ու թարգմանության դասին, ուսուցիչը հարցրեց, թե մեզ մոտ ինչ աստվածաշունչ է ու քանի որ ճիշտ չէ դասի ժամանակ խոսել այդ թեմայով, ասացի, որ եթե կուզի դասից հետո կխոսենք: Ինքն էլ ասաց իր դասաժամը կտրամադրի դրան, ու երեխաների մոտ ատելություն սկսվեց իմ նկատմամբ, ընդհուպ մինչև մի տղա հարձակվեց ինձ վրա՝ պատռելով վերնաշապիկս, ու ասաց, որ մենք բանակ չենք գնում: Բնականաբար ես նրան չպատասխանեցի այդ ժամանակ: Ուսուցիչը փորձեց հանգստացնել նրան ու ոչ մի լուրջ բան չասեց: Ես էլ անմիջապես զանգեցի ծնողներիս, կես ժամ հետո եկան դպրոց, գնացինք տնօրենի մոտ, **ով հետո այդ տղային ծեծեց (հուսով ենք, սա չափազանցություն է. ծանոթություն խմբագրի)**: Տնօրենն էլ հետո հանդիմանեց ուսուցչին, հաջորդ օրն էլ եկավ տղայի հայրը ու փոխհատուցեց վերնաշապիկի գումարը ու դրանից հետ կարծես ամեն ինչ հարթվել է: Սա մեկ շաբաթվա պատմություն ունեցող դեպք է»: Տնօրենի գործուն միջամտությամբ ուսուցչուհին դասարանում ներողություն է խնդրել թույլ տրված արարքի համար:

Մեկ այլ նման դեպք. «Օրինակ ես մի դեպք գիտեմ, երբ ուսուցիչը հրահրել է, որ դասարանում աշակերտները հալածեն ու ծաղրեն զույգ քույրիկներին, որից հետո քույրիկները մոտեցել են ուսուցչին ու առանձին հարցրել, թե ինչ վատ բան է նա տեսնում իրենց կրոնի մեջ ու առաջարկել են նստել դասերին առանց խանգարելու: Ուսուցիչը սա հասցրել է մինչև տնօրեն, բայց աղջիկները մինչև վերջ մնացել են չեզոք դիրքերում»:

Պետք է նկատել, որ «Եհովայի վկաներ» կազմակերպության երեխաներն ամենից խոցելի խումբն են հանդիսանում, որովհետև վերջին տարիներին լրատվամիջոցներով ու տարբեր տեղեկատվական հոսքերով նրանց են վերագրվում տարբեր արատներ, հնարավոր ու անհնարին մեղքեր: Հատկապես ինքնասպանության դեպքերի պարագայում առաջին վարկածը, որ սկսում են շրջանառել լրատվամիջոցները, ինքնասապանություն գործողի՝ որևէ կրոնական կազմակերպության պատկանելու վարկածն է, իսկ առավել հաճախ հենց Եհովայի վկաներ կազմակերպության: Այս պատճառաբանությունը կրոնական փոքրամասնությունների երեխաների կողմից անվերապահ մերժվում է:

Այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների մոտ ևս պատահել են նման դեպքեր, սակայն հազվադեպ: Այսպես, Վանաձորի ավետարանական եկեղեցիներից մեկի հովվի երեխաները ժամանակին բավականին խնդիրներ են ունեցել դպրոցում իրենց կրոնական պատկանելության պատճառով, ինչը սակայն շտկվել է ժամանակի ընթացքում: Ներկայումս նման դեպքերը հազվադեպ են հանդիպում ավետարանականների շրջանում:

Արհամարհանք կամ անհանդուրժողական վերաբերմունք երեխաների կողմից դրսևորվել է նաև իրենց համադասարանցի մոլոկանի կամ եզդու նկատմամբ: Ուշագրավ է, որ հայ երեխաները, երբ իրար փորձում են մեղադրել անճաշակության մեջ կամ պարզապես վիրավորել, ասում են. «Հո դու եզդի չես»: Չնայած նրան, որ ընդհանուր առմամբ հանդուրժողական է վերաբերմունքը մոլոկանների նկատմամաբ, այնուամենայնիվ Վանաձորի ավետարանական երեխաներից մեկը պատմեց, թե ինքն ինչպես է պաշտպանել իրենց դասարանի մոլոկան երեխային այլոց ոտնձգություններից. «Մեր դասարանի մոլոկանին ես միշտ պաշտպանել եմ, չնայած այն ժամանակ դեռ ես հոգևոր չէի: Նրան վատ էին վերաբերվում, նրա հետևից ռեպլիկաներ էին թողնում, հետևից ասում էին կարտոլ, քյալամ, այն ինչ նրանք վաճառում են»:

Էթնիկ փոքրամասնությունների պարագայում նման դեպքերը բավականին սակավ են, որը հիմնականում պայմանավորված է նրանց համայնքների մեկուսացված բնույթով ու մեծամասնության երեխաների հետ հնարավորինս քիչ կապերով: Սուբէթնիկ որոշ առանձնահատկություններ, Իրանից ներգաղթած և հայկական դպրոցում սովորող դեռահաս աղջկա օրինակով, որին սովորեցրել են խոնարհ լինել և տղաների կողմից կոպիտ վերաբերմունքին չարձագանքել, առիթ են հանդիսանում հասակակիցների կողմից ագրեսիայի կամ թեթևակի բռնությունների կիրառման, ինչպես օրինակ մշտական քաշքշուկը տղաների կողմից: Փաստորեն, այստեղ առկա է այն համոզմունքը, որ փոքրամասնություն ներկայացնելը անպաշտպանվածության և թուլության դրսևորում է:

Մեծամասնություն ներկայացնող երեխաների շրջանում որոշակի տարբերություններ կային Երևան ու Գյումրի քաղաքների միջև: Երևան քաղաքում բնակվող ՀԱԵ հետևորդ երեխաները առավել հանդուրժողական վերաբերմունք ունեն այլազգիների ու այլադավանների նկատմամբ, ընդ որում դա տարածվում էր նաև իսլամադավանների նկատմամբ: Գյումրի քաղաքի երեխաները որոշակի վերապահումով էին մոտենում կրոնական փոքրամասնություններից՝ համարելով, որ «նրանք շեղվել են ճիշտ ուղուց, մոլորյալ են և մի օր հետ կգան ՀԱԵ»: Երեխաները պատմում են, որ որոշակի բացասական վերաբերմունք կա այլազգի իսլամադավանների նկատմամբ, որն առավելապես դրսևորվում է պարսիկների հանդեպ. «Մեր դպրոցում պարսիկ աղջիկ կա, ում ճնշում են մեր խմբի տղաները, մինչև անգամ հարվածում, բայց որ հարցնում ենք ինչու ես թույլ տալիս, ինքն ասում է իմ եղբայրն է, ես ինչ պիտի անեմ, հնազանդ է այդ իրավիճակին»:

Ինչպես տեսնում ենք, ագրեսիայի պատճառ կարող է լինել էթնիկ կամ կրոնական տարբերությունը, բայց ագրեսիան կարող է նաև խտրականություն չճանաչել: Եթե էթնիկ կամ կրոնական կամ անձնային տարբերությունը բերում է ագրեսիային չդիմադրելուն՝ այն ուժեղանում է: **Այսպիսով, կարևոր է հենց սկզբից ագրեսիան կասեցնելու, առանց պատասխան ագրեսիայի, մեթոդներ սերմանել մանկահասակ կոլեկտիվներում:**

ՀԱԵ պատմություն առարկան ու փոքրամասնությունների վերաբերմունքը

Դպրոցական ծրագրում ընդգրկված են «Զինվորական նախապատրաստական պատրաստություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաները:

Զինվորական պատրաստություն առարկան հակադրվում է Եհովայի վկաների պացիֆիստական գաղափարախոսության հետ: Վերջինս նրանց արգելում է զենք վերցնել: Երեխաները գտնում են, որ հայրենիքի մասին ուսուցանող առարկան օգտակար է, սակայն եթե այն պարունակում է խղճի դեմ տարրեր, ապա անընդունելի է, և հրաժարվում են խղճի դեմ գործողություններ կատարել: Եհովայի վկաներ երեխաները կարծիք հայտնեցին, որ եթե նման առարկա չլիներ առարկայացանկում, կամ իրենց թույլատրվեր չհաճախել այդ դասընթացին կամ դրա փոխարեն ընտրել այլ առարկա, ավելի լավ կլիներ:

«Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի պարագայում խնդիրն այլ էր. թե կրոնական և թե էթնիկ փոքրամասնությունների երեխաներն ընդունում էին այդ առարկայի կարևորությունը՝ իրենց գիտելիքների զարգացման առումով: Անհանգստություն պատճառողը դասերի ժամանակ ուսուցիչների կողմից երբեմն

պարտադրվող ծիսական գործողություններն են, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել պարտադրելը: Արմավիրում Եհովայի վկա մի աղջիկ հետևյալ դեպքը պատմեց. «Երբ դասը սկսվում էր աղոթք էինք անում, ես ուսուցչին ասացի, որ աղոթք չեմ անելու մյուսների հետ, ասաց եթե չես աղոթելու, ուրեմն «երկուս» եմ նշանակելու (բայց չէր նշանակում) ու քառորդդ երկու եմ փակելու, բայց ես գերազանց էի սովորում դպրոցում ու դասղեկն էլ այնտեղ փորձում էր վեճը հարթեցնել: Նա (ուսուցիչը) ամեն դասի ժամանակ նրբանկատորեն «կպնում էր» կրոնին ու երեխաներին տրամադրում իմ դեմ: Երեխաներն այդքան էլ հաճույքով չէին գնում այդ դասին: Ես ռուսական կրթություն ունեի, հայկական տառերը լավ չգիտեի, դասը լավ չէի սովորում, ես նրան ասում էի դուք ինձ ռուսերենով տվեք այդ թեմաները, ես ձեզ ռուսերեն կպատասխանեմ, նա ռուսերեն լավ հասկանում էր, ռուսերեն էի պատմում, որ այդպես գնահատական դներ, տանը ինտերնետից էի օգտվում: Իններորդ դասարան երբ հասանք արդեն հանգստացել էր, որովհետև տեսավ, որ իր առարկայի դասերը սովորում էի հարգելով, այլևս բան չէր ասում»:

Քանի որ առարկան համարում են պիտանի, առաջարկները փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից վերաբերում են ժամերի կրճատմանն ու թեմաների կրկնության բացառմանը, հատկապես հայոց պատմություն առարկայի հետ: Եհովայի վկա երեխաներից մեկը Երևան քաղաքում գտնվող քոլեջի պրակտիկան այսպես է ներկայացնում. «Ես անցյալ տարի եմ քոլեջում անցել այդ առարկան, ու իմ դասախոսները գիտեին, որ ես Եհովայի վկա եմ, ու եթե ասեի, որ չեմ ուզում սովորել այդ առարկան, հաստատ խնդիր չէր լինի: Բայց ես չհրաժարվեցի այդ առարկայից, որովհետև պատմական տվյալները սովորելն ինձ հետաքրքիր էր: Մեր քոլեջում չեն պահանջել, որ աղոթք անենք, խաչակնքվենք և այլն»: Խնդրահարույց է նաև այն, որ երեխաների մեծ մասը համարում են, որ ուսուցիչներն այս առարկային մոտենում են ձևականորեն և մակերեսային՝ որպես լրացուցիչ դասաժամ իրենց դրույքաչափը լրացնելու համար:

Քանաքեռում գտնվող «Կյանքի խոսք» եկեղեցու դպրոցում[15] «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դասավանդում է այդ եկեղեցու ներկայացուցիչը, և ինչպես նշում էին երեխաները՝ բավական օբյեկտիվ: Ավետարանական եկեղեցի այցելող երեխաներն ավելի մեծ խնդիր են տեսնում հեթանոսական վիպաշխարհի մեջ, որտեղ կան բազմաթիվ աստվածներ, քան քրիստոնեական կրոնի դասավանդման մեջ: Հիմնական խնդիրներից են համարում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների՝ ոչ բավարար հավատ ունենալը, ինչը,

[15] Մասնավոր հանրակրթական դպրոց է, որի հիմնադիրը «Կյանքի խոսք» եկեղեցին է: Լիցենզավորված է և իր շրջանավարտներին տալիս է պետական նմուշի ավարտական վկայականներ: Երկու տարի է, ինչ կասեցված է միայն տարրական դասարանների լիցենզիան: Հիմա գործում են միայն միջին և ավագ դպրոցի դասարանները:

նրանց կարծիքով, խնդիրներ է ստեղծում դասընթացի օբյեկտիվ դասավանդման համար: Որոշ դեպքերում ուսուցիչները, իմանալով երեխաների՝ այլ կրոնի պատկանելը, զգուշություն են ցուցաբերել ու փորձել հավասարապես վերաբերվել բոլորին, ինչպես նշում է Սևան քաղաքի ավետարանական երեխաներից մեկը: Եղել են դեպքեր, երբ կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ երեխան հրաժարվել է նույնիսկ դասագիրքը վերցնելուց՝ պնդելով, թե իրեն ինչն անհրաժեշտ է մայրը կսովորեցնի:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան այլ առարկայով փոխարինելուն կամ կամընտրական առարկա դարձնելուն կողմ էին մեծամասնության ՀԱԵ հետևորդ երեխաները. նրանք նախընտրում էին անցնել կրոնների ընդհանուր պատմություն, ավելին իմանալ իսլամի և բուդդիզմի մասին: Այս մոտեցումը պայմանավորված է այս խմբի երեխաների առավել բաց բնույթով ու այլազգիների հետ շփման փորձով, ինչը բնական հետաքրքրություն է ստեղծել այլադավանների ու այլազգիների նկատմամբ: Առարկայի նկատմամբ արմատական դիրքորոշում ունեին աթեիստական կողմնորոշմանը հակված երեխաները. «Ես աթեիստ եմ ու շատ անհետաքրքիր էր անցնելը և ում է հետաքրքիր դա, ով կցանկանա դառնալ քահանա, այդ առարկան հատուկ քահանա դառնալու համար է»:

Այսպիսով, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը դրական են վերաբերում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային, նրա թեմաները համարում են ազգային պատմության մաս ու, եթե այն չի հակասում իրենց խղճին, սովորում են հաճույքով: ՀԱԵ հետևորդ երեխաների շրջանում տիրում է կարծիքների բազմազանություն. Երևանում բնակվող ու արտասահմանի հետ շփվող երեխաները կողմնակից են կամընտրականության սկզբունքին, իսկ Գյումրեցի երեխաները հակված են պարտադիր առարկա ունենալու ներկա դրությունը պահպանելուն:

Բարձրագույն ուսուցումն ու փոքրամասնությունները

ԲՈՒՀ ընդունվելու հարցում էական տարբերություններ կան գյուղական ու քաղաքային բնակչությունների երեխաների միջև: Էթնիկ փոքրամասնությունների մի ստված հատվածը պատկանում է գյուղական բնակչությանը: Այս կատեգորիայի երեխաներից շատերն իննամյա կրթությունից հետո ցանկություն չեն ունենում շարունակել ուսումը: Մոլոկան համայնքում տղաների մեծ մասը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանք է գտնում Հայաստանում կամ Ռուսաստանում: Նույնը կարելի է ասել եզդի համայնքի մասին, որը վերջին տարիների արտագաղթի պատճառով լուրջ քանակական փոփոխություն է կրել:

Ռուս-մոլոկանների պարագայում խնդիրն այլ է. Ռուսաստանի դեսպանատունը նպաստում է նրանց տեղափոխմանը Ռուսաստան ու բարձրագույն կրթություն ստանալուն. «Մեզ շատ լավ հնարավորություն է ընձեռված Ռուսաստանի դեսպանատան միջոցով հարցազրույց հանձնել, որի ժամանակ ստուգում են մայրենի լեզվի, այսինքն ռուսերենի գիտելիքները, որից հետո հնարավորություն ենք ստանում ընդունվել Ռուսաստանի որևէ համալսարան առանց քննությունների ու նաև ստանալ կրթաթոշակ: Մեր գյուղից էլ արդեն ուսանողներ կան, որ սովորում ու ապրում են Ռուսաստանում: Երևանում՝ Սլավոնական համալսարանում էլ ուսանող ունենք»: Հայաստանի բուհերում սովորող ռուս մոլոկանների քանակը ցածր է, իսկ Ռուսաստան գնացածներինը՝ բարձր: Ռուսաստանում կրթություն ստացած ռուս-մոլոկաններն ավարտելուց հետո չեն վերադառնում Հայաստան՝ աշխատանք գտնել չկարողանալու պատճառով:

Այլ է պարագան քաղաքային բնակչության պարագայում՝ անկախ կրոնական պատկանելությունից: Եթե համայնքն առանձնապես պահպանողական է, նվազում է բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողների թիվը: Սակայն թե ավետարանական եկեղեցիների և թե Եհովայի վկաների ու այլ կրոնական համայնքների ներկայացուցիչների թվում բուհ ընդունվել ցանկացողները շատ են: Ավետարանական ընտանիքի անդամ երեխաները պնդում էին, որ իրենց համայնքից բարձրագույն կրթություն ստացողների քանակը 75-80 տոկոս է կազմում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ Երեխաների պաշտպանության կոնվենցիայի հոդված 24-ի համաձայն պետությունը պարտավոր է երաշխավորել երեխաների՝ առողջապահական համակարգի ծառայություններից օգտվելու իրավունքը: Հայաստանի կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշմամբ, ինչպես նաև 2012թ. դեկտեմբերի 28-ին հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բուժօգնության կազմակերպման չափորոշիչի» համաձայն Հայաստանում բուժօգնությունը մինչև 7 տարեկան երեխաների համար անվճար է: Նախածննդաբերական շրջանի ու երեխայի ծննդյան հետ կապված ծախսերը ՀՀ քաղաքացիների համար ևս հոգում է պետությունը:

Պետությունը պարտավորվել է նվազեցնել նորածինների և երեխաների մահացության դեպքերը: Դրանք շատ են գյուղական բնակավայրերում, և հատկապես նվազ Երևան քաղաքում, որտեղ բժշկական ծառայությունների որակը բարձր է շրջաններում ապահոված որակից: Շրջանների բնակիչներից շատերը ծննդաբերությունը կազմակերպում են Երևանում:

Տեղեկացվածություն ու ծառայությունների հասանելիություն

Առողջապահական ծառայությունների մատուցման հիմնական խնդիրներից է երեխաների ու ծնողների իրազեկվածության ցածր մակարդակը, հատկապես՝ ծառայությունների անվճար լինելու վերաբերյալ: Թե գյուղական և թե քաղաքային բնակչության շրջանում երեխաները ներկայացրեցին դեպքեր, երբ իրենցից բժշկական ծառայությունների դիմաց գումար են գանձել: Շրջաններում երեխաները բողոքում էին շտապ օգնության ոչ բարվոք վիճակից, ավտոմեքենաների և ճանապարհների թերություններից: Գյումրիում շտապօգնությունն ուշանում է ճանապարհների պատճառով, նույնիսկ տաքսին հրաժարվում է գնալ որոշ թաղամասեր, որտեղ ճանապարհները քանդված են: Ավելի վատթար վիճակում են գյուղական բնակիչները: Խնդիրները կրկնապատկվում են ձմռանը, քանի որ ճանապարհները չեն մաքրվում ու անհնար է դառնում հիվանդին հասցնել հիվանդանոց:

Բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչ երեխաները կանոնավոր կերպով ստանում են պատվաստումներ: Վերապահություն արեցին միայն Եհովայի վկաները՝ նշելով, որ եթե պատվաստանյութը պարունակի արյան բաղադրիչ իրենք կհրաժարվեն դրանից: Դպրոցներում պատվաստումներից հրաժարման դեպքեր եղել են, սակայն, երեխաների համոզմամբ, դա պայմանավորված չի եղել կրոնական մոտեցումներով:

Էական խնդիր է բժշկական ծառայությունների որակը: Բազմաթիվ համայնքներում չկա բուժքույր կամ բուժակ. նա աշխատանքային գրաֆիկով գալիս է շրջկենտրոնից կամ այլ համայնքից: Օգնության են հասնում տարիքով կանայք: Երեխաները տեղյակ չեն որևէ դեպքի, երբ բժիշկը մերժի բուժօգնություն ցուցաբերել կրոնական պատճառներով:

Ծննդաբերություն տան պայմաններում

Ծննդօգնության ու ծննդաբերության անվճար լինելը վերջին տարիներին էականորեն նվազեցրել է տնային պայմաններում ծննդաբերության դեպքերը: Գյուղերում, եթե շրջկենտրոնները հեռու են կամ չկա հասանելի հիվանդանոց, դեռ տեղի են ունենում ծննդաբերություններ տան պայմաններում, հատկապես ձմռանը, երբ ճանապարհների անանցանելիության պատճառով հնարավոր չէ կնոջը հասցնել հիվանդանոց: Տան պայմաններում երեխա ունենալու սովորույթը կենդանի է եզդիների շրջանում. «Բժշկի օգնության համար Թալին կամ Երևան ենք գնում: Գյուղում բուժքույր ունենք, պատվաստումներ է անում: Ծննդաբերությունները Թալինում են լինում: Տանը ծննդաբերում են այն դեպքում, երբ ճանապարհները փակ ու անանցանելի են լինում: Մեզնից մի քանիսն էլ տանն են ծնվել, որովհետև ձմռանը չեն կարողացել հասցնել հիվանդանոց կամ բուժքույր չի եղել: Գյուղում մի պառավ կին կա, որ ծնունդ է ընդունում»: Տնային պայմաններում ոչ մասնագետների կողմից ընդունվող ծնունդների ժամանակ պատահում են մահացության դեպքեր:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Վաղ ամուսնություններ

Եզդի համայնքում երեխաները պատմեցին, որ քսան տարեկանում ամուսնացած չլինելն աղջկա համար անընդունելի է, այդպիսի աղջիկը համարվում է «տանը մնացած»: Տղաների համար ամուսնության տարիք է դիտվում 21-24ը, երբ տղան վերադառնում է զինծառայությունից: Եզդի ու ռուս-մոլոկան համայնքները նմանություն ունեն վաղ ամուսնությունների հակված լինելու առումով:

Կրոնական փոքրամասնությունները չեն տարբերվում մեծամասնության երեխաներից, բացառությամբ շատ պահպանողական եկեղեցիների: Տարբերությունը պայմանավորված է ոչ թե կրոնով, այլ գյուղում կամ քաղաքում բնակվելով: Քաղաքային բնակչության ամուսնության տարիքը մի քանի տարով բարձր է գյուղականից:

Թե՛ կրոնական, և թե՛ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները կարևոր են համարում սեփական համայնքի ներսում ամուսնությունները: Էթնիկ փոքրամասնությունների համար դա կենսական ու կարևոր խնդիր է ասիմիլացման վտանգը կանխելու համար: Ավանդույթը խախտողների հետ համայնքի մեծամասնությունը դադարում է շփվել: Մոլոկան համայնքում որպես խառը ամուսնության վերջին դեպք հիշեցին դեռ սովետական ժամանակ ադրբեջանցու հետ մոլոկան աղջկա ամուսնությունը, որից հետո զույգը տեղափոխվել է Կրասնոդար: Եզդի համայնքում ևս խառը ամուսնության եզակի դեպքեր եղել են:

Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչ երեխաները նշեցին, որ հնարավոր համարում են այլ կրոնի պատկանող մարդու հետ ամուսնությունը, եթե տվյալ անձն ունենա հոգևոր բարձր հատկանիշներ ու ապրի հոգևոր օրենքների համաձայն. «Ամուսնությունը կատարվում է այնպես, ինչպես ընդունված է Հայաստանում, որևէ առանձնահատուկ մոտեցում չկա: Իհարկե «աշխարհիկների» նման չի լինում: Կարող են հովիվին ասել, մենք պարտավոր ենք մեր հովիվին ասել ամեն ինչ, ինքը մեր ընկերն է: Հարսանիքը արվում է հենց բողոքական եկեղեցում: Եղել է դեպք, երբ առաքելականն ու բողոքականն են ամուսնացել, պսակադրությունը եղել է առաքելական եկեղեցում և դա համայնքից արտաքսման չի հանգեցրել»: Հարցազրույցներին մասնակցած որոշ երեխաների ծնողներից մեկը չէր պատկանում տվյալ կրոնական ուղղությանը, այլ պատկանում էր մեծամասնությանը՝ ՀԱԵ-ին, կամ աթեիստ էր:

Երբ քննարկվում էր Ընտանեկան օրենսգրքի մեջ ամուսնության թույլատրելի տարիքը ճշտելու հարցը ու որպես նախնական տարբերակ առաջարկվում էր տասնութ տարին և աղջիկների, և տղաների համար, եզդի համայնքը բողոքեց, նույնիսկ փողոցային պիկետներ կազմակերպեց, և կառավարությունը գնաց զիջումների՝ աղջիկների տարիքն իջեցնելով տասնյոթ: 2013թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց Ընտանեկան օրենսգրքում: Նոր դրույթների համաձայն՝ անձը կարող է ամուսնանալ նաեւ 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաեւ 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, եւ ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է (10-րդ հոդված)

Ամուսնության գրանցում

Թե կրոնական և թե էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները նշում էին, որ ամուսնության գրանցումը քաղաքացիական ակտերի գրանցման պետական մարմնում (ԶԱԳՍ) պարտադիր է: Նշում էին, որ ամուսնության գրանցումը էական է մի շարք տեսանկյուններից: Եհովայի վկա երեխաներից մեկը նշում է. «Բոլոր Եհովայի վկանները պետք է սկզբից զագս գնան նոր ամուսնանան. Աստվածաշնչում էլ նման սկզբունք կա, որ տասնութը լրանում է պետք է զագսավորվեն ու ամուսնանան: Զագսից հետո հովիվը հատուկ ելույթ է ունենում ժողովում ամուսնացածների համար»:

Բոլոր համայնքների ներկայացուցիչները նշում էին, որ կարևոր է օրենքներին հետևելը: Նրանք փորձում են պահպանել օրենքը՝ ավելորդ խնդիրների առջև չկանգնելու համար:

Ավետարանական տարբեր եկեղեցիներում աղջկա ու տղայի ծանոթության, իսկ հետագայում ամուսնության գործընթացը տեղի է ունենում տարբեր ձևերով: Պահպանողական համայնքներում ծանոթությունը նույն համայնքի ներսում միջնորդավորված է և տեղի է ունենում հովվի միջոցով. «Օրինակ մեզ մոտ այսպես է, եթե տղան հավանել է աղջկան, մոտենում է պատասխանատուին, ասում է, որ հավանել եմ ու ուզում եմ իր հետ ծանոթանամ, ամուսնանամ: Աղջիկն էլ իր խմբի պատասխանատուին է ասում, որ մեր խմբի տղաներից է հավանել, հետո աղջկանից հարցում են անում, եթե ցանկանում է ապա հանդիպում են»:

Կրոնական կազմակերպությունները սահմանափակումներ ունեն կրկնակի ամուսնության պարագայում: Այս հարցում խիստ սահմանափակումներ է կիրառում Եհովայի վկաներ կազմակերպությունը. «Վերամուսնությունը թույլատրվում է միայն պոռնկության հիմքի վրա»: Ավետարանական եկեղեցիները նման հարց չեն բարձրացրել:

Բոլոր համայնքները կարևորում են «ընտանիք» ինստիտուտը:

Ծնողների համաձայնությամբ կամ պայմանավորվածությամբ ամուսնության դեպքեր հետազոտական խմբի կողմից չեն հայտնաբերվել: Միայն Գյումրիում ՀԱԵ հետևորդ երեխաները նշեցին, որ ծանոթ են նման դեպքերի:

ԿՐՈՆԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ԼԵԶՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սահմանադրության (Հոդված 26) և վավերացված միջազգային համաձայնագրերի համաձայն Հայաստանում յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք:

Հայաստանում վերջին տարիներին նկատված հիմնական խնդիրը բանակում ծառայել հրաժարվելն է Եհովայի վկաների կողմից: Մինչև այլընտրանքային ծառայության մասին օրենքի ընդունումը և հետագա փոփոխությունները, դատվել են մի շարք Եհովայի վկաներ, որոնցից մեկի գործը հասավ Եվրադատարան, և այդ գործով նախադեպային որոշում ընդունվեց[16]: Հետագայում Եհովայի վկաները շահեցին մի շարք դատեր Հայաստանի դեմ ու կառավարությունը ստիպված գնաց զիջումների ու բարեփոխումների: Այլ կրոնական կամ էթնիկ համայնքների հետ նմանատիպ խնդիրներ չեն ծագել:

Կրոնի ազատություն

Հայաստանում գործող, գրանցված ու չգրանցված, բոլոր կրոնական կազմակերպություններն ազատորեն հնարավորություն ունեն իրենց հաշվին գումարել հավաքներ, կատարել ծիսական գործողություններ ու անցկացնել պաշտամունքներ: Կրոնական կազմակերպությունների մի մասն ունի սեփական տարածք կամ շինություն, որտեղ անցկացվում են պաշտամունքները: Ամռան ամիսներին նրանք անցկացնում են ճամբարներ Հայաստանի շրջաններում առանց որևէ խոչընդոտի: Որոշ եկեղեցիներ նույնիսկ ունեն իրենց կից դպրոցները և այլ սոցիալական հաստատություններ:

Հավաքների ազատության իրավունքից օգտվում են նաև էթնիկ փոքրամասնությունները:

Ռուս-մոլոկանները, ի տարբերություն այլ էթնիկ փոքրամասնությունների, իրենց հավաքներն անցկացնում են փակ, որտեղ այլադավանի կամ այլազգու մուտքը չի խրախուսվում: Երեխաները նշեցին, որ հավաքներն արգելող կամ խոչընդոտող

[16] «Բայթյանն ընդդեմ Հայաստանի» գործը (Դիմում No. 23459/03). Տե՛ս http://www.hra.am/hy/events/2011/07/08/court

որևէ դեպք իրենց հայտնի չէ: Ավելին, ռուս-մոլոկանները ունեն տարբեր ճյուղեր, որոնք իրենք իսկ աղանդ (секта) են անվանում և այդ ճյուղերը միևնույն գյուղական համայնքում իրարից անկախ հրավիրում են իրենց ժողովներն ու ազատորեն պաշտամունք մատուցում:

Դասագրքեր փոքրամասնությունների լեզվով

Էթնիկ փոքրամասնությունների երեխաները խնդիր չեն տեսնում մայրենի լեզուն սովորելու և այլ առարկաներ մայրենի լեզվով սովորելու առումով: Եզդի համայնքի դասագրքերը հրատարակում է պետությունը, իսկ մոլոկանների պարագայում, բացի պետական հոգածությունից, մեծ աջակցություն է ցուցաբերում Ռուսաստանի դեսպանատունը: Դասագրքերից բացի, Ռուսաստանի դեսպանատունը և դպրոց այցելող տարբեր պաշտոնյաներ դպրոցին են նվիրում սարքավորումներ, համակարգիչներ, ինչպես նաև հնարավորություններ են ստեղծում ռուս-մոլոկան երեխաների համար միջնակարգ կրթությունը ստանալուց հետո բարձրագույն կրթություն ստանալ Ռուսաստանում:

Ռուս-մոլոկան երեխաների համար որոշակի խնդիր են ներկայացնում հայկական առարկաները, ինչպիսին Հայոց եկեղեցու պատմությունն է, որի ռուսերեն դասագրքերը չկան: Այս իրավիճակում ուսուցիչները կարդում են հայերեն ու ռուսերեն լեզվով թելադրում համառոտագիր, և երեխաները սովորում են ըստ համառոտագրերի:

Եզդի երեխաների հետ զրուցելիս պարզ դարձավ, որ նրանց մոտ սեփական պատմության, կրոնի և գրականության գիտելիքները շատ ավելի քիչ են, քան հայոց պատմության, ՀԱԵ պատմության և հայ գրականության գիտելիքները: Եվ որ ավելի ահազանգող է, մեծահասակներին շատ չի անհանգստացնում այս փաստը: Նկատվում է եզդիերենով դասավանդող ուսուցիչների պակաս՝ հատկապես նոր սերնդում, և դասերն անցկացնում են հիմնականում հայազգի ուսուցիչներ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սահմանադրությամբ (Հոդված 27) ու ՄԱԿ Երեխաների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայով (Հոդված 13) երեխաներն իրավունք ունեն ազատորեն արտահայտել իրենց կարծիքը, որոնել, ստանալ և հաղորդել ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ:

Հայաստանում առկա պատրիարխալ ընտանիքի պայմաններում դժվար է պատկերացնել երեխաների այս իրավունքի լիակատար իրագործումը. այն հաճախ սահմանափակվում է ծնողների կամ ընտանիքի այլ անդամների կողմից: Ազատ տեղեկատվություն ստանալուն խոչընդոտում են նաև օբյեկտիվ պատճառները՝ տեղեկատվություն ստանալու էլեկտրոնային միջոցները երբեմն անհասանելի են երեխաներին, չնայած վերջին տարիների՝ համակարգիչների և ինտերնետի հասանելիության զգալի աճին:

Կրոնական ու էթնիկ փոքրամասնությունները, ինչպես և մեծամասնությունը, որպես տեղեկատվության հիմնական աղբյուր նշում են հեռուստատեսությունը, հետո՝ ինտերնետը և ռադիոն: Շրջաններում մարդկանց հասանելի են միայն որոշ հեռուստաալիքներ, որտեղից նրանց հրամցվում է զուտ պաշտոնական տեղեկատվություն, ու ակամայից մարդիկ հայտնվում են տեղեկատվական շրջափակման մեջ: Փոքրամասնությունների երեխաները նշում են, որ որոշակի վերապահումով են մոտենում հեռուստատեսությունից տրվող տեղեկատվությանը: Առավել դիտվող հաղորդումներն են սպորտային հաղորդումները (մասնավորապես՝ ֆուտբոլ) տղաների դեպքում և հեռուստասերիալները՝ աղջիկների դեպքում:

Համացանցի հասանելիությունը

Երեխաների մեծ մասն ունեն բջջային հեռախոսներ ու դրանց միջոցով մուտք ունեն համացանց: Մեծամասնությունն ինտերնետից օգտվում է զուտ սոցիալական ցանցերից օգտվելու նպատակով, սակայն դա ևս որոշակի փոփոխություններ է մտցրել նրանց առօրյայում: Լեզվի պատճառով ռուս-մոլոկանները հիմնականում մուտք են գործում ռուսալեզու կայքեր, իսկ հայախոս բնակչությունն օգտվում է այլ ցանցերից ևս: Մասնավորապես Գյումրու, Վանաձորի և Երևանի երեխաների մեծամասնությունն օգտվում են facebook սոցիալական ցանցից ու ակտիվ օգտագործում են այն:

Ավետարանական եկեղեցի այցելող երեխաներից ոմանք նշեցին, որ իրենց ընտանիքի անդամները՝ հայրը կամ եղբայրը հաճախ իրենց արգելում են օգտվել ինտերնետից կամ ընդհանրապես օգտվել ինտերնետից, քանի որ համացանցը դիտվում է որպես անբարոյականություն տարածող գործիք. «Ես չեմ նայում հեռուստատեսություն, քանի որ իմ հայրիկը թույլ չի տալիս ամեն ինչ նայել: Արգելված է սոցիալական ցանցեր մտնել: Ֆեյսբուք մտնելու փոխարեն ավելի լավ է Աստվածաշունչ կարդալ»: Երեխաների մեջ կային այնպիսիք, ովքեր համարում էին, որ տեղեկատվությունն ուժեղացնում է մարդուն, զինում գիտելիքներով և մարդուն դարձնում ավելի պաշտպանված տարբեր շեղումներից ու «թշնամիներից»:

Գյուղական միջավայրի երեխաներն ինտերնետից օգտվում են զուտ «օդնոկլասնիկի» կայքից օգտվելու համար ու չեն այցելում տեղեկատվական կայքեր, իսկ քաղաքային բնակչության երեխաները ոչ միայն օգտվում են սոցիալական կայքերից, այլև՝ սոցիալական ցանցերն օգտագործում տեղեկատվության տարածման համար ու կարդում տեղեկատվություն:

Եզդի համայնքում նկատելի է վառ արտահայտված խտրականություն աղջիկների՝ ինտերնետի և նույնիսկ բջջային հեռախոսի օգտագործման առումով: Տղաներն ու տղամարդիկ արգելում են աղջիկներին մուտք գործել սոցիալական ցանցեր, պատճառաբանելով դրանց հնարավոր վնասակար ազդեցությունները և այն կարծրատիպի առկայությունը, թե «ինտերնետից օգտվող աղջիկները վատն են»: Ծնողների կողմից խրախուսվում է տղաների նման վարքագիծը, հակառակ աղջիկների ցանկությանը՝ նույնպես ծանոթանալու ժամանակակից համարվող ինտերնետային ռեսուրսին:

Հասարակագիտություն առարկան

Իրավունքների մասին տեղեկատվությունը և դրանց գիտակցումը կարող են էական փոփոխություններ մտցնել փոքրամասնությունների, և ոչ միայն, իրավունքների պաշտպանության ոլորտում:

Այս առնչությամբ երեխաները ոգևորությամբ են նշում «Հասարակագիտություն» առարկան, որից նրանք տեղեկություններ են ստանում իրենց իրավունքների մասին, բարձրանում է իրենց իրավագիտակցության մակարդակը ու նրանք սկսում են տեր կանգնել իրենց համոզմունքներին, ընդդիմանում են ֆիզիկական բռնությանը: Կրոնական փոքրամասնություն երեխաները նշում են, որ այդ առարկայից նրանք սովորել են, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն դավանելու իր կրոնը և որևէ մեկը չի կարող խոչընդոտ հանդիսանալ նրանց: Իրավունքների գիտակցման շնորհիվ էլ պատահել է դեպք, երբ ուսուցչուհին

սկսել է վատաբանել կրոնական փոքրամասնության կրոնական համոզմունքները և երեխաները կարողացել են իրենց ծնողների միջոցով բողոքել տնօրենին, որն ուսուցչուհուն նկատողություն է արել:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Էթնիկ փոքրամասնությունների երեխաներն ինքնամփոփ էին, չէին կարողանում կամ ամաչում էին իրենց մտորումները բարձրաձայն արտահայտել, հստակ երևում էր նրանց մեկուսացվածությունը ընդհանուրից: Կրոնական փոքրամասնությունների երեխաները կարողանում էին իրենց հայացքները հստակ արտահայտել ու խոսել իրենց մոտեցումների մասին: Կրոնական փոքրամասնությունների երեխաների մեջ իրենց խոսքի ճկունությամբ ու ազատությամբ աչքի էին ընկնում Եհովայի վկաները, քանի որ, նրանց խոսքերով, «Մեր առաքելություններից մեկը մեր սովորածը մյուսների հետ կիսելն է»:

Դպրոցում երեխաները վաղ տարիքում չեն սովորում ազատորեն արտահայտել իրենց կարծիքը, ինչը էականորեն փոխվում է ժամանակի ընթացքում, երբ նրանք մեծանում են: Էթնիկ փոքրամասնությունների երեխաների պարագայում պատկերը մեծ փոփոխություններ չի կրում: Սևանի դպրոցներից մեկում երեխաներն իրենց խոսքը տնօրինությանն էին հասցնում աշակերտական խորհրդի միջոցով, որը, երեխաների պնդմամբ, արդյունավետ գործիք է խոսքի ու արտահայտման ազատության իրավունքն իրագործելու ճանապարհին:

Երեխաների պնդմամբ ընտանիքներում ծնողները հաշվի են առնում իրենց կարծիքը, հատկապես իրենց վերաբերող հարցերում՝ հագուստի գնման, խմբակներ հաճախելու և այլ նման հարցերում: Նրանց մեծամասնությունը տեղյակ չէ ընտանեկան բյուջեից ու նմանատիպ հարցերից: Երևանի երեխաներից մեկը պատմեց, թե ինչպես է որոշում կայացրել դպրոցի փոփոխության վերաբերյալ ու ընդունվել «Այբ» դպրոցը: Նույնը չեն կարող իրենց թույլ տալ ոչ մայրաքաղաքային երեխաները. այստեղ ընտանիքի հայրը որոշումներ է ընդունում բոլորի փոխարեն: Պատրիարխալ ընտանիքի մոդելը այսպես է նկարագրում երեխաներից մեկը. «Պարտադիր է, որ տղամարդը որոշ չափով առավելություններ ունենա ընտանիքում: Օրինակ, քանի որ տղամարդն է տան սյունն ու հենարանը, կինն ավելի շատ պիտի զբաղվի երեխայի խնամքով, ավելի շատ մտածի ընտանիքի դրական մթնոլորտի մասին, որպեսզի ճիշտ միջավայր ստեղծի իր երեխայի մեծացման ու ամուսնու համար: Բայց ամուսինը պետք է նախևառաջ մտածի գումար վաստակելու մասին և ընտանիքը լավ պահելու մասին»:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները նշում են, որ իրենց համայնքներում բավականին ընկերական ու սոցիալական մթնոլորտ է, երբ նրանք կարող են ու երբեմն պարտավոր են տարբեր հարցերով կիսվել հովվի հետ, որը ոչ միայն հոգևոր առաջնորդն է, այլ նաև ընկեր ու զրուցակից: Համայնքում տիրող դրական հոգևոր մթնոլորտը ստեղծում է միջավայր, որտեղ երեխաներն, իրենց պնդմամբ, իրենց ազատ են զգում և ազատ են արտահայտվում:

Մասնակցություն

Քաղաքային երեխաների կյանքն անհամեմատելի բազմազան է գյուղական միջավայրում մեծացողի առօրյայի համեմատ: Եզդի համայնքի երեխաները պատմում են, որ մասնագիտացված խմբակներ հաճախելու համար (կարատե, պար, երգ) ստիպված են գնալ Թալին, որտեղ կարող են հասնել միայն տաքսիով: Եզդի երեխաները հայազգի ընկերներ ունեն, որոնց հետ գտնվում են նորմալ հարաբերությունների մեջ: Իհարկե այդ ընկերների քանակը սահմանափակ է՝ համեմատած եզդի ընկերների հետ: Մոլոկան երեխաներն առավել մեկուսացված են: Նրանք մատնանշեցին, որ առանձնապես շփում չունեն հայ հասակակիցների հետ ու հայ ընկերներ չունեն: Վանաձորի և Սևանի ավետարանական եկեղեցու երեխաները պատմեցին, որ իրենց շրջապատում գտնվող մոլոկան երեխաներին իրենց հասակակիցներն այդքան էլ հանդուրժողաբար չեն վերաբերվում:

Հասարակական կյանքի մեջ ներգրավվածության իմաստով բոլոր երեխաներից տարբերվում էին Երևանի և Գյումրու երեխաները, ովքեր ակտիվորեն ներգրավված են կամավորական գործունեության և այլ ակտիվիզմի մեջ:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները խնդիրներ են տեսնում մեծամասնության երեխաների հետ շփման հարցում, քանի որ վերջիններիս «ոչ հոգևոր» բնույթը խանգարող հանգամանք է: ՀԱԵ հետևորդ մեծամասնությանը նրանք անվանում են «աշխարհիկներ» ու «հիմնական տարբերությունը զգում են հենց աշխարհիկ երեխաներից այն պատճառով, որ նրանք սխալ ճանապարհով են գնում»: Ավետարանական երեխաների համար կարևոր նշանակություն ունեն «Young life» հոգևոր ճամբարները, որտեղ նրանց սովորեցնում են աստվածաշնչյան պատգամներն ու տարբեր առաքինություններ:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները գիտեն, որ միմյանց հետ չի կարելի խոսել կրոնական թեմաներով, քանի որ նրանց միջև եղած տարբերությունները կարող են հանգեցնել կոնֆլիկտի: Այդ պատճառով էլ նրանք աշխատում են շփվել միմյանց հետ առանց կրոնական թեմաների շոշափման: Մեծամասնության ներկայացուցիչ երեխաները նույնն են պատմում աթեիստների հետ շփման մասին:

Երեխաների համար էական բացթողում է մշակութային կյանքի պակասը, որը պայմանավորված է մշակութային օջախների թույլ գործունեությամբ կամ բացակայությամբ: Անհրաժեշտ է Հայաստանի շրջաններում և գյուղերում նպաստել մշակութային կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը:

Խտրականություն

Էթնիկ փոքրամասնությունների երեխաները չհիշեցին իրենց նկատմամբ խտրական վերաբերմունքի որևէ դեպք: Հայ երեխաները հիշեցին խտրականության դեպքեր այլ երեխաների կողմից էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ: Էթնիկ փոքրամասնությունների երեխաները Հայաստանում, իրենց պնդմամբ, օգտվում են բոլոր այն իրավունքներից, ինչ մեծամասնության երեխաները:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները հաճախ են բախվել խտրական վերաբերմունքի դպրոցում, հարևանների ու ընկերների միջավայրում կամ այլ հարաբերություններում: Խտրական վերաբերմունքի են արժանացել Եհովայի վկա երեխաները, որոնց նկատմամբ հասարակության մեջ տարածված կարծրատիպային մտածողությունը նրանց է վերագրում տարբեր բացասական արատներ ու վարքագիծ: Եհովայի վկա երեխաները նշում են, որ հաճախ են առնչվել նման վերաբերմունքի, որը սակայն ժամանակի ընթացքում փոխվել է իրենց ադեկվատ ու դրական վարքագծի պատճառով: Նրանք նշում են, որ շատ գործատուներ նախապատվում են Եհովայի վկաներին, երբ աշխատանքն առնչվում է ֆինանսական հարցերին, քանի որ վստահ են նրանց ազնվության մեջ: Եհովայի վկա երեխաներից մեկը պատմեց հետևյալը. «Այդպիսի դեպք եղել է առաջին կամ երկրորդ դասարանում, երբ մենք շատ փոքր էինք ու իմ դասընկերուհին իմացավ, որ ես մասնակցում էի հավաքներին ու նրա ծնողները, երբ իմացան, ասեցին ընկերուհուս, որ չշփվի հետս: Ես նրան ասացի, որ դա քո որոշումն է: Իսկ երբ մենք մեծացանք, ինքը ցանկություն հայտնեց ինձ հետ շփվել ու նրա ծնողներն էլ ավելի վստահությամբ էին ինձ վերաբերում»: Նույն պնդումն անում էին կրոնական այլ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները մեծամասնության երեխաներին անվանում էին աշխարհիկներ, որոնց մեջ բացակայում է հոգևորը, իսկ մեծամասնության ներկայացուցիչները փոքրամասնության երեխաներին անվանում են հավատացյալներ կամ աղանդավորներ ու նրանց վերաբերում իբրև այլոց: «Մենքի» ու «նրանքի» փոխհարաբերությունը երևում է առավել պահպանողական կամ խարիզմատիկ կրոնական փոքրամասնությունների պարագայում, իսկ առավել ազատական գաղափարների հարող կրոնական կազմակերպությունների երեխաները խնդիրներ չեն տեսնում ՀԱԵ եկեղեցում աղոթելու կամ մոմ վառելու մեջ: Վանաձորի ավետարանական եկեղեցի այցելող երեխաներից մեկը նշում է. «Մեզ որպես ավետարանական չեն նայում, այլ հավատացյալ: Երբ մեր հարևաններն իմացան, նրանք մեզանից հեռվացան: Մի մասն ասում է, որ հավատացյալ է, ուրեմն նրանից պետք է լավն ակնկալել, կա նաև հակառակ մոտեցումը»:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները պնդում են, որ երբ նման խտրական վերաբերմունք եղել է, նրանց հաջողվել է դա հաղթահարել համեբարատար վերաբերմունքի, ատելությանը ատելությամբ չպատասխանելու, երկարատև զրույցների ու դրական վարքագծի դրսևորման արդյունքում:

Ի տարբերություն կրոնական համայնքների հասուն ներկայացուցիչների և հովիվների, որոնք անընդհատ նշում են խտրական վերաբերմունքի առկայության մասին, երեխաները նման վերաբերմունքի դեպքեր ավելի քիչ են նշում, հիշում կամ գիտակցում:

Մանկան աշխատանք

Հայաստանում երեխաների աշխատանքը սովորաբար տարանջատվում է երեխաների շահագործումից: Գյուղական բնակչության էթնիկ փոքրամասնությունների երեխաները վաղ հասակից օգնում են ծնողներին գյուղատնտեսության ու տնային աշխատանքներում: Ռուս-մոլոկանների շրջանում բերքահավաքի ժամանակ երեխաներից շատերը դպրոց չեն հաճախում, որպեսզի օգնեն ծնողներին կարտոֆիլի կամ կաղամբի հավաքման գործում: Տղաներն օգնում են մեքենա-մեխանիզմների օգտագործմանը, իսկ աղջիկները տնային գործերում: Եզդի տղաների մոտ հաճախ հանդիպող երևույթը կենդանիներին արոտավայր տանելն է ըստ հերթի[17], իսկ աղջիկներն օգնում են ծնողներին խնամելու նորածին կամ կրտսեր երեխաներին, իսկ ամուսնությունից հետո աշխատում են ամուսնու տանը:

Կրոնական փոքրամասնությունների երեխաները, եթե քաղաքային բնակչությանն են պատկանում, չեն աշխատում մինչև չափահաս տարիքը: Նրանցից ոմանք դպրոցական արձակուրդի ժամանակ անում են որոշակի աշխատանքներ, հիմնականում հարազատների կամ ծնողների մոտ, կամ այլ տեղ, աշխատելով մանր գումարներ հոգալու համար մինիմալ ծախսերը, սակայն նման երեխաները շատ չեն: Նույնը կարելի է ասել ՀԱԵ երեխաների մասին, որոնց մի մասը, իրենց և ոչ ընտանեկան բյուջեի համար, կատարել են վճարովի փոքր աշխատանքներ արձակուրդի ժամանակ:

[17] Հայաստանի գյուղերում գյուղացիները պայմանավորվում են իրար հետ ու ամեն օր գյուղացիներից մեկը տանում է կենդանիներին արածեցնելու ամբողջ օրով: Օրերի քանակը որոշվում է տվյալ գյուղացու կենդանիների քանակով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած հետազոտության սահմանափակ բնույթին, այն վեր հանեց մի շարք խնդիրներ, որոնք գտնվում են տարբեր հարթություններում. դրանցից որոշ մասը վերաբերում է Հայաստանում առկա զարգացման ավելի ընդհանուր խնդիրներին ու առաջնահերթություններին (աղքատություն, ուսուցիչների սխալ վարք, վատ վարձատրություն կամ անորակ դասավանդում). մյուս մասը՝ զուտ փոքրամասնություններին (մոլոկանների՝ Հայաստանում, բարձրագույն կրթություն ստանալուց հրաժարվելը, կամ Եհովայի վկաների՝ ռազմագիտության դասերից հրաժարվելը). վերջապես երրորդ մասը՝ գերիշխող արժեքային համակարգին (խտրականության դրսևորումները, կոնֆլիտից խուսափելու պրակտիկաները): Այդ խնդիրների որոշ մասն առաջնային է և հրատապ, սակայն մյուսներն էլ հասցեագրման կարիք ունեն համակարգված ձևով: Հաշվի առնելով դա, ստորև բերված առաջարկները միասին ներկայացնում են համակարգ, թեև խմբավորված են ըստ հասցեատեր թիրախային խմբերի, և կարող են օգտավետ լինել բոլոր շահագրգիռ մարմիններին և Հայաստանի զարգացման համար աշխատող բոլոր կազմակերպություններին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Խրախուսել և առաջարկել էթնիկ ու կրոնական փոքրամասնությունների հետ կապված հակախտրական օրենսդրության ընդունում և առանձին օրենքներում կատարել համապատասխան հավելումներ խտրականությունը արգելելու վերաբերյալ (խորհուրդ է տրվում նաև միջազգային ու հասարակական կազմակերպություններին, ՄԻՊ գրասենյակին),
- Միջոցներ ձեռնարկել էթնիկ փոքրամասնությունների շրջանում կրթության շարունակականության ապահովման ուղղությամբ ու տարբեր միջոցներով խրախուսել (հիմնականում աշխատատեղերի բացումով) փոքրամասնությունների ցանկությունը կրթություն ստանալ,
- Պետական մարմիններին ու իրավապաշտպան կազմակերպություններին՝ բարձրացնել երեխաների իրավագիտակցության մակարդակը համալիր ծրագրերի միջոցով (խորհուրդ է տրվում նաև միջազգային ու հասարակական կազմակերպություններին),
- «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դարձնել կամընտրական. նրան զուգահեռ դասավանդել կամ կամընտրական առարկա առաջարկել «համաշխարհային կրոնները» և/կամ «մշակույթի պատմություն» առարկաները,
- Ստեղծել աշխատանքային խումբը, որը դասագրքերից կհանի կրոնական ու էթնիկ պատկանելիության նույնականացման դրույթները,
- Մշակել, վերամշակել և/կամ կիրառության մեջ դնել ուսուցիչների համար «էթիկայի կանոններ»՝ հանդուրժողականության, երեխաների իրավունքները գիտակցելու և պաշտպանելու, բազմազանությունը հարգելու և այլ կարևոր դրույթներով համալրված՝ դրանք հաշվի առնելով նաև պարբերաբար կատարվող՝ մանկավարժների գնահատման պրոցեսում,
- ԲՈՒՀ-երում նպատակային տեղեր հատկացնել փոքրամասնությունների երեխաներին,
- Հնարավորություն ստեղծել Եհովայի վկաներին հրաժարվելու Զինվորական պատրաստվածություն առարկայից, իսկ այլ կրոնական կազմակերպությունների համար՝ ՀԱԵ առարկայից, եթե նման պահանջ լինի,
- Ստեղծել կանոնակարգ զինպատրաստվածություն առարկայի վերաբերյալ, որը կարգավորի, թե ինչպես պիտի այդ դասավանդվի Եհովայի վկաներին եթե նրանք չեն հրաժարվում առարկան ուսումնասիրելուց. անցկացնել զինպատրաստվածություն դասավանդողների ուսուցում այդ հարցի վերաբերյալ,
- Միջոցներ ձեռնարկել դպրոցներում ուսուցիչների կողմից դրսևորվող ֆիզիկական բռնության դեպքերը վերացնելու ուղղությամբ,
- Բոլոր առաջարկները, որոնք ենթադրում են միջամտության հնարավոր ձևեր և մեխանիզմներ, պիտի ներառվեն երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 ռազմավարական ծրագրի և այլ կարևոր ծրագրերի մեջ,

- Համայնքներում ստեղծել սոցիալական աշխատողի հաստիք. այս առաջարկը ներառված է Երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագրում, բայց դեռ իրականացման գործընթացում է, և կարիք կա այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ կատարելու (խորհուրդ է տրվում նաև տեղական ինքնակառավարական մարմիններին),
- Խրախուսել և հնարավորություններ տրամադրել էթնիկ փոքրամասնություններին սեփական մշակույթի ու պատմության ուսումնասիրման զարգացման, մշակութային այլ դրսևորումների՝ գրականություն, թատրոն, կերպարվեստ, մեդիա, զարգացման համար:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ և ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

- Կազմակերպել սեմինարներ, քննարկումներ հայոց լեզվի, գրականության, հայոց պատմության, հայոց եկեղեցու պատմության, հասարակագիտության ուսուցիչների համար իրավական, կրոնական, մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ,
- Միջոցներ ձեռնարկել փոքրամասնությունների երեխաների ու նրանց ծնողների շրջանում բժշկական ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ, օրինակ՝ նպաստել ընտանեկան բժիշկների համակարգի կայացմանը կամ այլ լեզուներով մատչելի առողջապահական կամ տարածված հիվանդությունների կանխարգելման թեմաներով տեղեկությունների թարգմանությանը և տարածմանը (խորհուրդ է տրվում նաև տեղական ինքնակառավարական մարմիններին),
- Ֆինանսավորում հատկացնելիս առավելություն տալ այն կազմակերպություններին, որոնք իրենց միջոցառումների մեջ կնախատեսեն ընդգրկել կրոնական ու էթնիկ փոքրամասնությունների երիտասարդներին ու երեխաներին (մեյնսթրիմել կրոնական և էթնիկ հանդուրժողականությունը),
- Իրագործել կրոնական և էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ակտիվության և ինտեգրմանը նպաստող ծրագրեր,
- Լրացնել էթնիկ ու կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ օբյեկտիվ հաղորդումների պակասը մեդիա հաղորդումներ, ֆիլմեր պատրաստելու միջոցով՝ ներգրավելով փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև ստեղծել փոքր սոցիալական գովազդային հոլովակներ՝ իրավիճակների ներկայացմամբ (խորհուրդ է տրվում նաև հասարակական կազմակերպություններին),

- Կազմակերպել դասընթացներ լրագրողների համար, ովքեր լուսաբանում են կրոնական ու էթնիկ փոքրամասնությունների խնդիրները (խորհուրդ է տրվում նաև հասարակական կազմակերպություններին),
- Խթանել մանկապարտեզներում տեսանկարահանող սարքերի տեղադրումը. այդպիսով վերահսկելի կդառնան մանկապարտեզներում հնարավոր բռնության դեպքերը, կնվազի դրանց քանակը (խորհուրդ է տրվում նաև հասարակական կազմակերպություններին),
- Խթանել և խրախուսել բազմակարծության տարածումը երեխաների շրջանում ծրագրերի ու դասընթացների միջոցով (խորհուրդ է տրվում նաև հասարակական կազմակերպություններին),
- Փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունները համատեղել նույն համայնքներում կանանց ակտիվության և իրազեկման ծրագրերի հետ,
- Կատարել պարբերական խորքային ու քանակական հետազոտություններ փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

- Խրախուսել համայնքներում կազմակերպական մարմինների ստեղծմանը (քաղաքացիական խորհդակցական խումբ, քաղաքացիական ատենակալներ), որոնք կզբաղվեն երեխաներին հուզող հարցերով՝ իրավունքների ու շահերի պաշտպանություն, միջոցառումների կազմակերպում, այլ համայնքների ու կազմակերպությունների հետ կապերի պահպանում և այլն,
- Ստեղծել աշակերտական խորհուրդներ երեխաների իրավունքների պաշտպանությունը խորացնելու և խոսքի ազատության իրավունքը իրագործելու համար:
- Խրախուսել միջհամայնքային շփումներին նպաստող միջոցառումների կազմակերպումը՝ համայնքային տոներ, բերքահավաքի տոնակատարություններ, գյուղի ստեղծման օր, մշակութային տոնակատարություններ, սպորտային կամ միջդպրոցական մրցույթների անցկացում և այլն: Խուսափել բաժանարար տոների հասարակական լայն մասշտաբով կազմակերպումից՝ ինչպիսին են զուտ կրոնական բնույթ կրող ծիսակատարությունները:
- Կազմակերպել ՏԻՄերում և ավագանիների հետ շահերի պաշտպանության և որոշումների ընդունման մասնակցային հմտությունների զարգացման դասընթացներ և միջոցառումներ:

- Համայնքային բյուջեների կազմման և ծախսերի պլանավորման գործընթացներում ընդգրկել հանրային քննարկումներ և համայնքների համար առաջնային խնդիրներ ներառել, ինչպիսիք են՝ միջհամայնքային ճանապարհների հիմնովին նորոգումը, սոցիալապես անապահով և բազմանդամ ընտանիքներին աջակցություն, համակարգչային կենտրոնների ստեղծում:
- Հատուկ ուշադրություն կարելի է դարձնել էթնիկ փոքրմասնությունների դեպքում համայնքային հիմնադրամների ստեղծման հնարավորությունը՝ սփյուռքի ռեսուրսների հաշվին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

- Ակտիվացնել շրջաններում, գյուղական համայնքներում սեմինարների, միջոցառումների անցկացումը, իսկ առավել հաճախ՝ միջոցներ տրամադրել տեղական ուժերով այդ միջոցառումների կազմակերպման համար,
- Բոլոր միջոցառումներում ընդգրկել կրոնական ու ազգային փոքրամասնությունների երեխաներին,
- Խրախուսել ատելություն ու թշնամանք հրահրող կոչերի վերհանումը, դրանց դեմ ընդվզումը, և դրանց վերաբերյալ իրավական գնահատականներ տալու գործընթացները:

ԴԵՊՔԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

Դեպք 1:

Արմավիրի մարզում կազմակերպվել էր ֆոկուս խումբ, որտեղ մասնակցում էին տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչներ, այդ թվում Եհովայի վկաների ու հիսունականների երեխաներ: Բոլոր երեխաներն անխտիր նշում էին ուսուցիչների կողմից ֆիզիկական բռնության գործադրման դեպքերը: Եհովայի վկա երեխաներից մեկը պատմեց, որ խնդիրներ են ունեցել «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի ժամանակ, երբ ուսուցչուհին պահանջում էր բոլոր երեխաներից «Հայր մեր» աղոթքով սկսել դասը: Կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ-երեխաներին ուսուցչուհին ստիպել է սպասել դռան ետևում, երբ մնացած երեխաները կաղոթեն, կվերջացնեն, ու դրանից հետո նրանց թույլատրվել է մասնակցել դասին: Երեխաները հստակ զգացել են խտրականություն իրենց նկատմամբ: (Արմավիր, 15 տարեկան, իգական սեռ)

Դեպք 2:

Կրոնական փոքրամասնությունների (հատկապես ավետարանական) երեխաներից շատերը պատմում են, որ ծնողները կամ ավագ եղբայրները արգելում են իրենց օգտվել սոցիալական ցանցերից կամ ընդհանրապես ինտերնետից, քանի որ դա համարում են չարի աղբյուր, և դրա փոխարեն խորհուրդ տալիս կարդալ Աստվածաշունչ: «Ես չեմ նայում հեռուստատեսություն, քանի որ իմ հայրիկը թույլ չի տալիս ամեն ինչ նայել: Արգելված է սոցիալական ցանցեր մտնել: Ֆեյսբուք մտնելու փոխարեն ավելի լավ է Աստվածաշունչ կարդալ»: (Վանաձոր, 17 տարեկան, իգական սեռ)

Դեպք 3:

Պահպանողական կրոնական համայնքներում սահմանափակված է երեխաների՝ ուղղակի ընտրությամբ ընտանիք կազմելու հնարավորությունը: Պահպանողական ավետարանական համայնքներում ծանոթությունը նույն համայնքի ներսում միջնորդավորված է և տեղի է ունենում հովվի միջոցով. «Օրինակ մեզ մոտ այսպես է, եթե տղան հավանել է աղջկան, մոտենում է պատասխանատուին, ասում է, որ հավանել եմ ու ուզում եմ իր հետ ծանոթանամ, ամուսնանամ: Աղջիկն էլ իր խմբի պատասխանատուին է ասում, որ մեր խմբի տղաներից է հավանել, հետո աղջկանից հարցում են անում, եթե ցանկանում է ապա հանդիպում են»: (Արմավիր, 18 տարեկան, իգական սեռ)

Դեպք 4:

Եհովայի վկաներ կազմակերպության երեխաներից մեկը պատմեց, որ իրենց դասարանում ուսուցչուհին ստեղծել է այնպիսի իրավիճակ, երբ հրահրել է թշնամանք ու ատելություն իր նկատմամբ, որի արդյունքում ագրեսիվ

տրամադրված տղաներից մեկը հարձակվել է Եհովայի վկա տղայի վրա ու պատռել նրա վերնաշապիկը. «Հայոց լեզվի ժամին, լեզվի ծագման ու թարգմանության դասին, ուսուցիչը հարցրեց, թե մեզ մոտ ինչ աստվածաշունչ է ու քանի որ ճիշտ չէ դասի ժամանակ խոսել այդ թեմայով, ասացի, որ եթե կուզի դասից հետո կխոսենք: Ինքն էլ ասաց իր դասաժամը կտրամադրի դրան, ու երեխաների մոտ ատելություն սկսեց իմ նկատմամբ, ընդհուպ մինչև մի տղա հարձակվեց ինձ վրա՝ պատռելով վերնաշապիկս, ասաց, որ մենք բանակ չենք գնում: Բնականաբար ես նրան չպատասխանեցի այդ ժամանակ: Ուսուցիչը փորձեց հանգստացնել նրան ու ոչ մի լուրջ բան չասեց: Ես էլ անմիջապես զանգեցի ծնողներիս, կես ժամ հետո եկան դպրոց, գնացինք տնօրենի մոտ, ով հետո այդ տղային ծեծեց: Տնօրենն էլ հետո հանդիմանեց ուսուցչին, հաջորդ օրն էլ եկավ տղայի հայրը ու փոխհատուցեց վերնաշապիկի գումարը ու դրանից հետ կարծես ամեն ինչ հարթվել է: Սա մեկ շաբաթվա պատմություն ունեցող դեպք է»: (Երևան, 15 տարեկան, արական սեռ)

Դեպք 5:

Մեկ այլ տարածված օրինակ է ուսուցիչների կողմից երեխաների և նրանց դավանած հայացքների նկատմամբ անհարգալից կամ արհամարհական վերաբերմունքը: Ահա թե ինչ է պատմում երեխաներից մեկը. «Որ առաջին անգամ ուսուցիչը մտավ մեր դասարան ծանոթանալու, ինքը հարցրեց, թե ինչ-որ ուրիշ կրոնի մարդ կա՞: Մենք կանգնեցինք, ասեցինք Եհովայի վկա ենք, այդժամ մեզ վիրավորեց, ասեց պառավների ու բիձեքի հետ գնում նստում աղոթում եք գալիս եք, մենք էլ բան չասեցինք, հաջորդ օրը գնացի ասեցի կլինի ես ձեր հետ չաղոթեմ, ասեց աղոթի, բայց մի խաչակնքվի, ես չէի աղոթում, ոչ էլ խաչակնքվեցի, ուսուցիչը ասեց կսովորես հայր մերը, ես աստվածաշնչից սովորեցի, սակայն ուսուցիչը ասեց մերը գրաբար է, ձերը աշխարհաբար, ասեց՝ մերը կսովորես»: (Արմավիր, 15 տարեկան, իգական սեռ)

Դեպք 6:

Երեխաների կողմից որոշակի վերապահ վերաբերմունք կա իսլամադավանների նկատմամբ, որը դրսևորվում է պարսիկների ու թուրքերի նկատմամբ վերաբերմունքի մեջ: «Մեր դպրոցում պարսիկ աղջիկ կա, ում ճնշում են մեր խմբի տղաները, մինչև անգամ հարվածում, բայց որ հարցնում ենք ինչու ես թույլ տալիս, ինքը, ասում է, իմ եղբայրն է, ես ինչ պիտի անեմ, հնազանդ է այդ իրավիճակին»: (Երևան, 17 տարեկան, իգական սեռ)

Կրոնական ազատության վերաբերյալ օրենսդրությունը և կրոնական փոքրամասնությունների իրավիճակը Հայաստանում Եվրոպայի խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի, ինչպես նաև Անհանդուրժողականության և խտրականության եվրոպական հանձնաժողովի ուշադրության և հանձնարարականների առարկան էին: Միևնույն ժամանակ երեխաների իրավունքների պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի և Հայաստանի Կառավարության միջև կնքված Գործողությունների ծրագրի առանցքային թեմաներից է:

Հետևաբար, Վրաստանում և Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան աջակցությամբ Եվրոպայի խորհուրդը նախաձեռնեց մի ծրագիր, որի նպատակն է կրոնական փոքրամասնությունների երեխաների և պատանիների իրավունքների պաշտպանությունը: Ծրագիրը նախաձեռնվել էր կրոնական փոքրամասնությունների հանդեպ դրսևորվող անհանդուրժողականության դեմ պայքարելու նպատակով, ներառյալ առցանց տարածքում, և այն շատ կարևոր էր այս խմբերի երեխաների և պատանիների խնդիրներն ավելի լավ հասկանալու առումով:

Հետազոտական խումբը 2013թ. ամռան ընթացքում հարցազրույցներ և հանդիպումներ է վարել Հայաստանի տարբեր էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների և նրանց համայնքների առաջնորդների հետ: Ուսումնասիրությունն անդրադառնում է մի շարք կրթական և սոցիալական հարցերի, հատկապես կրթության մատչելիությանը էթնիկ և կրոնական փոքրամասնության երեխաների համար, առողջապահության հետ կապված հարցերի և դպրոցում առերեսված խտրականությանը:

Ուսումնասիրությունը մի շարք առաջարկներ է տրամադրում Հայաստանի կառավարությանը, Եվրոպայի խորհրդին, միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններին: Առաջարկները ներառում են օրենսդրական փոփոխություններ, կրթական և առողջապահական ծառայությունների մատչելիության բարելավում, իրազեկության բարձրացում իրավական, սոցիալական և այլ հարցերի շուրջ, ուսուցիչների վերապատրաստում, հասարակական կյանքին էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների մասնակցության ապահովում, դասագրքերի և որոշ առարկաների մատուցման ձևի վերանայում:

Kingdom of the Netherlands

Ուսումնասիրությանն աջակցել է Հայաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատունը:

ARM

Եվրոպայի խորհուրդը Եվրոպա մայրցամաքում մարդու իրավունքերով զբաղվող առաջատար կազմակերպությունն է: Այն ներառում է 47 անդամ երկիր, որոնցից 28-ը Եվրամիության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր երկրները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ մի համաձայնագիր, որի նպատակն է պաշտպանել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կատարումն անդամ երկրներում:

www.coe.int

http://book.coe.int

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE